№ 167 ՀԻՆԳՇԱԲԹԻ 1 ՕԳՈՍՏՈՍԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ 1 ՕԳՈՍՏՈՍԻ № 167

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ. 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak“

Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Ցայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով

Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՀԻՄՆԱԴՐԻՉ ԳՐԻԳՈՐ ԱՖԾԱՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“.
TIFLIS, Rédaction du journal „MSCHAK“.

Ցայտարարութիւնների համար պիտի վճարել 1 հրկսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ՝ 20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կոկակից դուրս գնվող անձերի և հիմարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метель и К°, և նրա բաժանմունքներում՝—Պետերբուրգում՝ Морская, 11, Ռիգայում՝ Маршалковская, 130, Վիլնայում՝ Большая 32 Պարիզում՝ 8 Площадь Биржи.

1913 թվի սարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կանեն բաժանորդագրվելը 10 ռուբլին, ծրիվարար կը ստանան հետևեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ»։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Ա. Վ. ԱՐՂՈՒԹԵԱՆ-ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿԻ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆԸ
ԵՒ
ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ
(Հիմարկված 1886 թ.)

ՓՈԽԱԴՐՎԱԾ ԵՆ աւելի ընդարձակ շինութիւն, որ կառուցված է յատկապէս ուսումնարանական հիմարկութեան համար—Վելիկոկնեաժսկայա փողոց, № 109, սեփ. տուն (Կրիլովսկայա փողոցից՝ 3-րդ տունը)։

Երկսեռ երեխաների ընդունելութիւն՝ 3—13 տարեկան։

Երեխաները պատրաստվում են պետական բոլոր դպրոցները մտնելու համար։

Յիշեալ հիմարկութեան նպատակն է՝ երեխայի թատար բոլոր այժի հարմոնիական զարգացումը, դաստիարակչական լայն խնդիրներ և գիտական հարկաւոր զարգացումներ։

Շինութեան կից կան՝ ընդարձակ այգի, ուր երեխաները աշխատում են փորձառու դեկավարի հսկողութեամբ, դրագարան-ընթերցարան, ձեռնարուեստի դասարան։

Ամեն օր շարժական խաղեր և երգեր՝ մարմնամարզութեամբ հանդերձ—դասատուների հսկողութեամբ։

Մանկական-Պարտէզի պարապմունքներով և շարժական խաղերով հետաքրքրվողները կարող են այցելել երեքշաբթի և հինգշաբթի օրերը՝ առաւօտեան ժամը 10—12-ը։

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ՕԳՈՍՏՈՍԻ 15-Ի։
ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՍԿԻԶԲԸ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 3-Ի։

(հ.) առ. 598. 5—2

Ղարաբաղի Հայոց Թեմական Հոգեւոր Դպրեւոցի
75-ԱՄԵԱՅ
ՅՕԲԵԼԵԱՆԻ ՀԱՆԴԷՍԸ
կատարվելու է սոյն թի օգոստոսի 10-ին եւ 11-ին։

Հոգաբարձութիւն և
Կենտրոնական Յոբելեանական Յանձնաժողով

(հ.) առ. 585. 3—3

Նոր-Նախիջեւանի Թեմական Հոգեւոր Դպրոցի
համար առաջիկայ 1913/14 ուսումնական տարվանից հրատարվում է բարձր կրթութեամբ
ՏԵՍՉԻ ՕԳՆԱԿԱՆ,
որ աւանդելու է նաև 12 դասս։

Խնդիրներ curriculum vitae-ի և ուսման վկայագրի հետ միասին ներկայացնել դպրոցի տեսչութեան մինչև առաջիկայ օգոստոսի 8-ը։

ՊԱՅՄԱՆՆԵՐ.—Օգնականին տահմանված է 1000 ռ. ռոճիկ և դասաւանական 12 դասի համար 840 ռ., ընդամենը 1840 ռ., (իսկ եթէ դասեր ստանձնէ նախակրթարաններում, օգնականութեան ռոճիկ 1200 ռ. և 12 դասի վարձ 600 ռ., ընդամենը 1800 ռ.)։ Աւանդելու տրամադրելի առարկաներն են՝ կամ կրօն, աստուածաբանութիւն և եկեղեցական պատմութիւն դասարաններում, կամ ռուսաց լեզու նախակրթարաններում։

առ. 603. 2—2 Տեսուչ՝ Ե. ՇԱՀԱԶԻԶ

ԱՐԱՄԱՅԻ ԸՆԿ. ՆՊԱՍՏՈՎ պահվող ՋԱՆԳԵԶՈՒՐ գաւառի ՂԱՓԱՆԻ և ՄԵՂՐԻԻ շրջանի ԳԻՒՂԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ համար հարկաւոր են միջնակարգ կրթութիւն ունեցող ուսիցիներ։ Ցանկացողները մանրամասն պայմանների մասին թող դիմեն ՄԻՆՉԵՒ ՕԳՈՍՏՈՍԻ 20-ը հետևեալ հասցէով. Баку, Телефонная, А. Г. Вачьянцу—Ուսումնարանական Յանձնաժողովին։

(օ.մ.) առ. 594. 3 3

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ
ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Ռտիշչէվսկայա 13, տելէֆօն 4—21.

Ընդունելութիւն թէ կանացի և թէ տղամարդկանց, նոյնպէս և վիրաբուժական կարիք ունեցող մնացեալ ստացիոնարն հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից), վաղօրօք գրվելու պայմանով։

Ընդունելութիւն կանացի, տղամարդկանց և մանկական իւանդութիւն ունեցող երեխայի հիւանդների, ամեն օր՝ ցերեկ. ժամը 11-ից մինչև 12-ը։

Ընդունելութիւն պրոֆ. Ռ. Ռ. Մուրքոտինի կողմից վիրաբուժ. կարիք ունեցող հիւանդների, վաղօրօք գրվելու պայմանով, երկուշաբթի և հինգշաբթի օրերը ցերեկ. ժամը 1—2-ը։

Հիւանդանոցի բժիշկները

Ա. Ա. Յարութիւնեան, Ն. Ն. Վասիլիվսկի, Վ. Ա. Զակրժէվսկի, Ի. Գ. Կալամկարեան, Ա. Ա. Նովիցկիյ, Գ. Ն. Տէր-Ներսէսեան, Ն. Զ. Ռափիկեան, Ա. Բ. Փիլէր, Ս. Պ. Շահպարունեանց։ Կօնսուլտանտ՝ պրոֆեսսոր Մ. Ս. Սուրքոտին։

(հ.կ.) առ. 579. 160—76

Հայոց տեսակ
Վանեցի գրող ՏԻԳՐԱՆ ՉԻԹՈՒՆԻՒ
ՄԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀ
Կը բովանդակէ հայ բնաշխարհի կեանքէն 15 գրուագներ՝ ինքնատիպ ոճով մը գրուած։
Դինը 50 կոպէկ (6 ղրշ.)
Դիմել բոլոր գրավաճառներին կամ ուղղակի հեղինակին (Վան)։

(հ.) առ. 537. 5—5

По умѣреннымъ цѣнамъ
Новѣйшихъ изящныхъ рисунковъ.
ПОЛНОМѢРНЫЕ
ОБОИ
ФАБР. СКЛАДЪ
МАНГИКІАНА
ПУШКИНСКАЯ № 7.
357. 50—26 (հ. 4.)

ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 5 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամակագրոցմ. ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. շուղարկողների խնդիրներ՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂԵՎԵՆ ԱՆՀԱՏԵՒԱՆՔ։

Ա. ՖԷԹՎԱՃԵԱՆԻ ԱՆԻՒ ԱԼԲՈՄԸ

զունատիպ

Լոյս տեսած Վիէննայի Գոմֆիչէ Քունստ Ինդուստրի Կայսերական Ընկերութեան տպարանում։

ԳԻՆԸ է Թիֆլիսում. մեծաքանակ—Մագազինների խանութում (Մագազինան կղզի). իսկ հատով—«Բլաց է նուար» խանութում և «Դուբանիցերց» գրավաճառանոցում։

Դինը—հատով՝ 1 ռ. 20 կ., մեծաքանակ գնողներին զեղչ 20%։

(հ.կ.) առ. 423. 25—20

ԲԺԻՇԿ
ՅՈՒՇԱՆԻԿ ՆԱԲԱԹԵԱՆ
Ընդունում է հիւանդներ կանանց և մանկաբարձութեան վերաբերեալ ամեն օր, բացի կիրակի օրերից, երեկ. ժամը 5—6-ը։
Հասցէն՝ Рождественская № 1.

առ. (հ.հ.) 4. 100—83

ՁՐԻ ՊԱՀԱՆՋԸ ՄԵՐ ԵՐԿՐՈՒՄ

I

Այսօր Թիֆլիսում մի յատուկ նիստ է հրաւիրվի եկող 1914 թվին Թիֆլիսում պարզելու, թէ ինչ եղանակով կարելի է բարձրացնել հողի արդիւնաբերութիւնը մեր երկրում։

Մենք յայտնեցինք «Մշակի» մէջ, որ պետական գանձարանը յատկացնում է բարւոքման նպատակների համար 150 միլիոն ռուբլի մի խոշոր գումար, որը ապագայում աւելի ևս կաճի և կը մեծանայ, բանալով ժողովրդի համար արդիւնաբերական նոր աշխատանքի աղբիւրներ։

Անշուշտ՝ մեր երկրի ամենաէական և կարևոր պահանջներից մէկը վերաբերում է ջրին, որի պակասութիւնը շատ դժուար վիճակի մէջ է դնում մեր երկրի գիւղացուն։

Եւ ջրի խնդիրը դրված է ոչ միայն տափարակի տաք շրջավայրերի համար, այլև լեռնային տարաւանդների համար, որտեղ, ճիշդ է, չը կայ այնպիսի արևահարութիւն ինչպէս բարձրադիր գոտիներում, բայց անհրաժեշտ է որոշ քանակութեամբ ջուր բոյսերի աճման շրջանում, որը յաճախ չէ բաւարարվում անձրևների տուած ջրերով։

Եւ մենք տեսնում ենք, որ լեռնային Շիրակը, Գեղարքունին, Ծաղկաձորը, Վայոց Ձորը, Զանգեզուրը, Լոռին և ուրիշ նոյնպիսի տեղեր յաճախ կարօտ են մնում ջրի և չեն կարողանում աշխատութեամբ բուսացնել արմտիներ ջրի պակասութեան պատճառով։

Նոյն լեռնային շրջաններում պակաս չեն դէպքեր, երբ կենդանիների հօտեր յաճախ մնում են առանց ջրի և ստիպված են շատ մեծ տարածութիւններ անցնել իրանց ծարաւը յագեցնելու նպատակով։

Եւ հասկանալի է, թէ ինչու ջրի մատակարարութեան հարցը հանդիսանում է այնքան խոշոր և էական մեր ժողովրդի համար երկրի բոլոր շրջաններում։

Անկասկած՝ ջուր մատակարարել հողին և բուսականութեան հնարաւոր է այն բոլոր դէպքերում, ուր շրջակայքում կան գետեր, վտակներ, աղբիւրներ, որոնցից կարելի է վերցնել առուներ ջրի հոսանքների համար։ Բայց մեր երկրագործ ժողովուրդը կորցնում է ջրի մեծ քանակութիւններ հենց այն պատճառով, որ նա չը գիտէ նրա ժողովելու, ամբարելու և խնայողաբար սպառելու եղանակները։

Այդ և դրանց նման խնդիրների քննութեան համար առաջիկայ համագումարը մի գեղեցիկ առիթ է, որից պէտք է մեր երկրի գործողները օգտվեն հերթական դարձնելու մի շարք հարցեր և մշակեն միջոցներ նրանց գործնական աջող լուծման համար։

Ա. Քալանթար

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԽԱԲՐԻԿՆԵՐ ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻՑ

Էրզրում, 25 յուլիսի

Լուռ, անձայն յուզմունքների մէջ են և՛ Թիւրքերը, և՛ հայերը։

Օսմ. հեռագրական գործակալութեան հաղորդած լուրերին ոչ ոք չէ հաւատում։ Այդպիսով կառավարութեան գործելակերպի ու վարքի վրա կասկածները դառնում են աւելի հիմնաւոր։

Օսմ. գործակալութիւնը միշտ վարդապէս լուրեր է հաղորդում։ Դրանց հետզուգընթաց հանում են օտար հիւպատոսների և նոյնիսկ առանձին անհատների համար մատնաւոր միջոցներով հեռագրական ծածկագիր լուրեր, որոնք պարզում են իրերի դրութիւնը բոլորովին այլ կերպ։

Ցաւառ կերպով լուրեր են պատմում, որ Ռուսաստանը Էրզրումի սահմանի վրա զօրքեր է կենտրոնացնում ու շատ շուտով կը գրաւի Էրզրումը։ Շատերը պնդում են, որ ռուսական բանակի առաջխաղացումը օրերի խնդիր է այլևս։ Զարմանալի չէր լինի, եթէ այդ ասողները լինէին հայեր։ Բանը դրանումն է, որ ասողները կառավարական պաշտօնեաներ են, զինուորականներ և այլն։

Մի հազարապետ «Մշակի» թղթակցի հետ խօսելիս՝ յայտնեց, որ գաղտնի հրաման է ստացվել Էրզրումի զինուորական շտաբում՝ զօրքերին և զէնքերը պատրաստ վիճակում պահելու։

Ներքին գործերի և զինուորական մինիստրների հրահանգի համաձայն, տեղական կառավարութիւնը կամաւորների արձանագրութիւն բաց արեց։ Ոչ ոք չէ մասնակցում։ Հրաման է ստացվել, որ ձի ունեցողները ներկայացնեն իրանց ձիերը կառավարութեան։ Ոչ ոք չէ լսում։ Ժանդարմերիան խստ միջոցներով սկսել է պահեստի զինուորներին հաւաքել թէ գիւղերից և թէ քաղաքից։ Հաւաքում են Թիւրքերից մինչև 30—35 տարեկանները։

Այս բոլոր պատրաստութիւնները ուղղված են իբր թէ Ռուսաստանի դէմ, որը կարծվում է, թէ պիտի գրաւի Թիւրքահայաստանը, ստիպելու Թիւրքային հեռանալ Եդիրնէից։

Թիւրք ժողովրդական խաւերում ռուսական բանակի այժի ու քաջութեան մասին առասպելական լուրերը կրկին սկսել են շրջան առնել։

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՏԱՐՕՆԷՆ

Մուշ, 16 յուլիս

Անցայս 10-ին, օսմանեան սահմանադրութեան տարեդարձին, Թիւրքերը կրկին ու երեքկին հեռագիրներ ստացան, որ օսմանեան բանակը գրաւած է Էդիրնէն և Կըրք-Քիլիսէն։ Այդ օրը Թիւրքերը ակնթարթաբար սկսան հայոց նկատմամբ սիգալ ու սանքալ, սպառնալով թէ «դուք առաջ բուլգարի մասին զուլեստով կը խօսէիք, բայց տեսէք՝ Էդիրնէն ու Կըրք-Քալիսէն վերցուցինք դարձեալ։ Դուք ալ զգոյշ եղէք, հա, և ձեր չափը ճանչցէք»։ Երիտասարդ-Թիւրքերը սկսեր էին բարձրագոչ աղաղակներով փողոցներն և գինետները շրջիլ։ Այժմ Թիւրքերը ծանր և տխուր կերևին, նման շատ խմած մարդու մը, որ քունէն եղնելուն ջղային կը դառնայ։

Աւելորդ կը գտնեմ տալ յականէ անուանէ պրովոկատորներու և տեղւոյս բռնակալներու անունները. միայն բոլոր իրավէկ դիտողները կը հաւատան, թէ այս գաւառի մէջ նոյնիսկ քիւրդական բոլոր շարժումները կը կատարուին մի առ մի տեղւոյս բռնապետներու թելադրութեամբ և հրահանգներով։ «Ինք հող՝ մուրուք շող» կրսէ հայկական առած։ Թիւրք բռնապետները հոս թաղուած են կառավարական թանձր վարագոյրի տակ, իրենք չեն երևիր, բայց իրենց գործերը միշտ տակն ու վրայ, միշտ ահ դողի մէջ կը պահեն երկիրը։

Մեր վարիչներու գիւանագիտութիւնը այս է, որ որքան կարելի է ընդհանուր մասսայական ջարդ, կոտորած ու աղմուկ առաջ չգայ, այլ միայն անոնց պէտք է ընդհանուր տերրօրի սարսափը, որպէսզի իրենց առեւրի և տնօրեայ կեանքի գործերը իրենց ցանկացածի պէս գլուխ բերեն։ Եւ ի հարկէ այս վիճակը կատարեալ է։ Ընդհանուր ջարդ չկայ, բայց Բիթլիս երթալ-գալու համար ոեւ կարելը վճառակեան մէկ երկու ոստիկանով հագիւ կարող է հաջի Մուսա-բէյի սահմաններէն անցնիլ և ինքզինքը Բիթլիս ձգել։

Երկիրը խաղաղ է, բայց շատ անգամ Բիթլիսէն եկած հակիրով ապրանքները քիւրդերէն կը յափշտակուին և հաջի Մուսա և Կասրմ բէյերուն տասանորդ տալով հագիւ կարելի կըլայ ապրանքի մէկ մասը ազատել և հոս հասցնել։ Իսկ հաջի Մուսա-բէյի, Ֆազլի Ալիի, Չպրանցի Իբրահիմ-բէյի պաշտպանները հոս քաղաքի մէջ՝ մրջիւնի վրայ չկոխող ամենապատուաւոր մարդիկն են, որ մեր երկրի կրեստոներն են և կառավարութեան աջ բազուկը։

Ահա թէ կառավարութիւնը ինչպէս կը մուցանէ բուն քիւրդական ապստամբութիւնները։

Թախիծ

ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Վիէննա, 6 օգոստոս

Կ. Պոլսոյ պատրիարք Յովհաննէս արքեպ. Արշարունիի հրաժարագրին ազգ. ժողովին կողմէ ընդունելու լուրը ծանուցանող հեռագրալուրը գիշեր ատեն Վիէննա հասնելով երեկ առաւօտ հրատարակուեցաւ Վիէննայի բոլոր թերթերուն կողմէ։ «Ալգեմայնէ Գօրէսպոնդենց» կաւելցնէ, թէ Տիգրանակերտի առաջնորդը պատրիարքական աթոռի հաւանական թեկնածու կը համարուի։

Ինչ է արդեօք հայկական հարցին արդի վիճակը։ Բալկանեան երկրորդ պատերազմը՝ իր բոլոր սահմռկեցուցիչ անակնկալներով պահ մը գրեթէ մոռացման դատապարտեց հայկական խնդիրը։ Վիէննայի դիւանագիտական աշխարհը [illegible] շապէս կը տիրէ այն համոզումը, թէ բալկանեան անհամաձայնութիւնը վերջնականապէս լուծուելէ յետոյ՝ իր հերթին Ադրիանուպոլսոյ խնդիրը այժմէութիւն պիտի ստանայ, և, այս ապիթով օսմ. կառավարութեան հետաքրքիր ուղղութիւնէն կախում պիտի ունենայ հայկական հարցին ճակատագիրը։

Արեւելեան նահանգներուն մէջ Ռուսիոյ կողմէ ինքնուրոյն գործունէութեան մը (sonderaktion) նպատակով ձեռք առնուած զինուորական միջոցները դադրած չեն դեռ։ Պարզ խօսելով՝ Հայաստանի՝ Ռուսիոյ կողմէ գրաւումը—հոգ չէ թէ ժամանակաւոր կերպով—միշտ հաւանական կը նկատուի Աւստրիոյ վարիչ շրջանակներուն մէջ։ «Կէօլնիշէ Ցայտնագ» լրագիրը շատ կարևոր լուր մը կը հրատարակէր երէկ։ Այս թերթին ստացած ստոյգ տեղեկութեանց համաձայն՝ օսմ. կառավարութիւնը Հայաստանի մէջ ձեռք առած է արդէն պաշտպանողական բոլոր միջոցները։ Ասել է թէ՝ ռուս գրաւման վտանգը միշտ մնայուն է։ Վիէննա հասնող լուրերու համաձայն՝ Կ. Պոլսոյ գերմանական դեսպան Վանկէնհայմ՝ եպարքոս Սայիդ Հալիմ-փաշային յայտարարած է նոյնիսկ, թէ գերմանական դիւանագիտութիւնը այժմէն կը վստահացնէ Թիւրք կառավարութիւն, թէ Հայաստանին Ռուսիոյ կողմէ գրաւման դէմ բողոքներէն մին ինք պիտի ըլլայ։

Գերմանական մամուլը առհասարակ այն համոզումը կը յայտնէ, թէ մէկ կողմէ Թիւրքերուն պնդումը՝ Էդիրնէն և Թրակիան պահելու մասին՝ և միւս կողմէ Բուլգարիոյ անտեղիտալի պահանջը քիչ ատենէն տեղի պիտի տայ Թիւրքо-Բուլգար ծանրակշիռ միջադէպի մը, և այս միջադէպը լուծելու ընական պաշտօնը Ռուսիա պիտի ստանձնէ։

Վիէննայի թերթերը որոշապէս չեն ըսեր սակայն, թէ Ռուսիա արդեօք ինչ միջոցներով ճնշում պիտի բանեցնէ Բ. Դրան վրայ։

Մոսկվայէն այսօր Վիէննա հասած հեռագիր մը կը ծանուցանէ. «Русск. Вѣд.»-ի գրածին նայելով՝ Թիւրքիան Էդիրնէէն կամ Թրակիայէն հրաժարեցնելը դժուարին պիտի ըլլայ։ Թէ որ Ռուսիան Հայաստանը նոյնիսկ գրաւէ, խնդիր է վիճանալ, թէ Թիւրքիա տեղի տալու պիտի յօժարի»։

Սուտ է թէ իրաւ, վիէննական գլխաւոր օրգանները այսօր ուրիշ շահեկան լուր մը կը հրատարակեն, որ էապէս մեծ առնչութիւն ունի հայկական հարցին հետ։ Իբրև թէ եթիոպիականները՝ Ռուսիան շահելու համար իւրոտ պատաներ նեռած ըլլան բերնին մէջ։ Պետերբուրգի օսմ. դեսպան ալբանացի Թուրխան-փաշան, կրսուի, կարևոր գործունէութիւն մը ցոյց տուած է այս ուղղութեամբ։ Ահա թէ ինչ կրսէ այս մասին «Голосъ Москвы» թերթը.

«Ռուսիա բնաւ երբէք կարիք չունի փող վատնելու կամ արիւն թափելու ու այս կերպով Թիւրքերը Էդիրնէէն վանելու՝ ի սէր եւրոպական համերգին առաջի կարգ անցած ազդեցութեան։ Վատնելի աղբիւրներէ դիտենք, որ օսմ. պետութիւնը խոստացած է Ռուսիոյ՝ ոչ միայն նպաստաւոր կերպով լուծել նեղուցներու խնդիրը, այլ նաև՝ Հայաստանի մէջ Ռուսիոյ տալ շատ նպաստաւոր առանձնաշնորհումներ»։

Հայկական հարցը, ուրեմն, այսօր անորոշ փուլի մը մէջ կը գտնուի։ Որովհետև ոչ ոք

ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

կրնայ զուշակել թէ Ռուսիա Հայաստանի մէջ պիտի գործէ թէ այլուր։ Սև-ծովի կողմէն նաւային ցոյց մը նոյնքան հաւանական կը նկատուի։ Արդէն, օսմ. ծովային մինիստրութիւնը, կը գրէ «Քէօնիշէ Ցայտունգ», պատրաստութիւններ կը տեսնէ՝ Սև-ծովու բերանը ականներով խցելու համար։

* * *

Պարիզի օսմ. դեսպանատան զինուորական կցորդ Զէմիլ-բէյ՝ «Die Zeit» թերթի պարիզեան թղթակցին յայտարարած է, ի մէջ այլոց.

«Հայաստանում Ռուսիոյ կողմանէ ձեռնարկուելիք շարժումներուն հանդէպ միւս պետութեանց հաւանութիւնը խնդրական է։ Օսմ. կառավարութեան բովանդակ յոյսը Գերմանիոյ վրայ է, որուն դիւանագիտական աջակցութիւնը այս րոպէիս անհուն երախտապարտութիւն յառաջ պիտի բերէ Թիւրքիոյ մէջ։ Անտարակոյս գերման կառավարութիւնը իրական շահ մը ունի օսմ. պետութեան համակրութիւնը գրաւելու կէտին մէջ։ Մեր ժողովուրդը հաւատք ունի գերման բարեկամութեան վրայ, և ան՝ ընդ միշտ յուսախաբ եղած պիտի ըլլայ, եթէ իր այս վստահութիւնը չիրականանայ»։

Զենոբ Սուրէնեան

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԹԵՐԱԿՂԶՈՒՄ

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԳՈՐԾԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
30 յուլիսի

Բուխարեստ.—Թագաւորը ստորագրեց զօրքերը տուն արձակելու հրամանը, որը կը գործադրվի յուլիսի 31-ից։

—

Բերլին.—Մամուլը և ֆինանսական շրջանները աշխոյժ մեկնութիւններ են տալիս Վիլհէլմ կայսրի և բումինական թագաւորի հեռագիրներին։ Լաւատեղեակ աղբիւրները ասում են, որ Գերմանիան կը նպաստէ բուխարեստեան դաշնագրի ընդունելուն։

Ֆինանսական շրջանները ողջունում են հեռագիրների փոխանակութիւնը։ Կարծում են, որ Բալկաններում խաղաղութիւն տիրի։

Լիւբէքում կայսրը իր արտասանած ճառում, ի միջի այլոց, ասաց. «Ես պաշտպանում եմ գերմանացի վաճառականին։ Դա թշնամին—իմ թշնամին է»։ Այդ խօսքերը այնպէս են մեկնաբանվում, թէ կայսրը ուզում է վերջնականապէս ընդունել Բուխարեստեան հաշտութիւնը։

—

Բուխարեստ.—Հաշտութեան դաշնագիրը ստորագրելու առիթով Թագաւոր Կայսրն ու բումինական թագաւորը հեռագիրներով փոխանակվեցին իրար հետ։

—

Բուխարեստ.—Պուանկարէի շնորհաւորական հեռագրին Կարլ թագաւորը պատասխանեց շնորհակալական հեռագրով։

Դաշնագիրը ստորագրելուն պէս, Կարլ թագաւորը դիմեց բալկանեան 4 թագաւորներին հեռագիրներով։ Բոլգարական թագաւորին հեռագրեց. «Հաշտութիւնը այս րոպէիս ստորագրվեց։ Զը նայելով այն բոլոր զոհաբերութիւններին, որ կրեց Բոլգարիան, նրա ժողովուրդը, ես հաւատացած եմ, կօրհնի ձերդ մեծութեանը, որ դուք կարողացաք վերջ տալ արիւնահեղ պատերազմին։ Այսուհետև կը բացվի զարգացման նոր դարագլուխ, որը կը բուժէ նոր վէրքերը և չի յապաղի վերականգնելու բոլգարական թագաւորութեան բարօրութիւնը»։

Ֆերդինանդ թագաւորը պատասխանել է այդ հեռագրին։

«Այսուհետև մենք կաշխատենք մոռանալ մեր կրած տանջանքները բեղմնաւոր խաղաղութեան մէջ և լաւագոյն ապագայի ստեղծելու յամառ աշխատանքում։ Մենք բոլորս ջանք կը թափենք, որպէսզի մեր երկու պետութիւնների միջև եղած յարաբերութիւնը լինի էլ աւելի բարեկամական, քան առաջ էր»։

Աթէնք.—Թագաւորը տեղեկացրեց կառավարութեանը, որ բուխարեստեան դաշնագրով Բոլգարիային անցնող շրջանների յոյն ու մահմեդական բնակիչների մեծ մասը սկսել է գաղթել քաղաքներից և գիւղերից Յունաստանի ձեռքում մնացող շրջաններում բնակութիւն հաստատելու համար։ Միներների խորհուրդը խորհրդակցեց անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելու համար և հարկաւոր կարգադրութիւններն արեց։ Նա վճռեց նիւթական օգնութիւն ցոյց տալ այն գաղթականներին, որոնք առանց կառավարութեան օգնութեան չեն կարող ապրել։

Աթէնքը պատրաստութիւն է տեսնում փառաւոր ընդունելութիւն ցոյց տալու յաղթանակով վերադարձող թագաւորին։

—

Կ. Պոլիս.—Պետութիւնների բանաւոր յայտագրին ի պատասխան Ադրիանոպոլից Թեւնամին Դուռը յայտնում է, որ սուլթանի կառավարութիւնը միշտ ձգտել է վարվել համապատասխան լօնդոնեան դաշնագրի, այնու ամենայնիւ Էնոս-Միդիա գծի մասին կայացրած որոշումը անկարող էր իրագործել կառավարութիւնը, որի առջև պարտականութիւն էր ծագում թոյլ չը տալ, որպէս զի սիստեմատիքաբար արմատախիլ անէին յիշեալ գծից այն կողմ եղած թիւրք ազգաբնակութիւնը։ Բացի դրանից կառավարութեան վրա պարտք կար դրված ստեղծել մի սահման, որը երաշխաւորէր մայրաքաղաքի ու նեղուցների ապահովութիւնը։ Վերջում յոյս է յայտնում, որ մեծ պետութիւնները կը համաձայնվեն Բ. Դրան կողմից յուլիսի 19-ի գրութեան մէջ յիշած սահմանագծին։

—

Սոֆիա.—Պատերազմական գլխաւոր բանակից ստացված է տեղեկութիւն, որ թիւրքերը ամրացնում են Կրքը-Քիլիսէն։ Թիւրք զինուորները խլում են ժողովրդից բերքը և տանում։ Տրնոովաջիկն ու մի շարք բոլգարական գիւղեր պաշարվել են թիւրքերից, որոնք կոտորել են բոլոր արու բնակիչներին։ Ցոյները ծառայում են թիւրքերի մօտ իբրև լրտեսներ։ Երէկ բոլգարական Կուլյուկօգլլար պահակատունը հարձակվեց թիւրքերի յարձակմանը, որոնք գերի տարան 60 հոգի։ Ինսներորդ զօրաբանակի հրամանատարը տեղեկացնում է, որ յունական գլխաւոր ոյժերը յետ են քաշվում Բեկիրթէպէից Մորումայի հովիտով, ճանապարհին այրելով բոլգարական բոլոր գիւղերը։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.
30 յուլիսի

Պետերբուրգ.—Գահաժառանգ Արքայորդու ծննդեան ոծնի առիթով մայրաքաղաքը առաւօտից զարդարված է դրօշակներով։ Բոլոր եկեղեցիներում և զօրամասերում կատարվել են հանդիսաւոր մաղթանքներ։ Կայսրութեան բոլոր քաղաքներից ստացվել են հեռագիրներ հանդիսաւոր մաղթանքներ կատարելու մասին։

—

Հելսինգֆորս.—Սէյմի ընտրութիւնների ժամանակ ընդամենը տրված է 725,017 ընտրողական ձայն։ Անցեալ ընտրութեան հետ համեմատելով 82,077 ձայն պակաս է և կազմում է ընտրողական ձայնի իրաւունք ունեցողների 52%-ը։ Խոշոր կորուստ են ունեցել քրիստոնեայ բանուորներն ու ստարօֆինները. սոցիալիստներն ու ագրարները համեմատաբար տարել են։ Սէյմի կազմը հետևեալն է. 90 սոցիալիստներ, 38 ստարօֆիններ, 26 երիտասարդ ֆիններ, 25 շվեդօմաններ, 18 ագրարներ. ընտրված են 83 նոր անձինք, ի թիւս որոց 22 կանայք. վերջիններիցս 14-ը սոցիալիստուհիներ են։ Պատմաւորների էկսիցն աւելին կրթական ցեղ չունի։

—

Հռոմ.—Միլանում գործադուլը վերջանալու մօտ է։ Բանուորների մի մասը վերսկսել է աշխատանքները։ Հռոմում աշխատանքի պալատը ժամը 4-ից գործադուլ յայտարարեց, բայց աշխատանքները շարունակվեցին նորմալ կերպով մինչև երեկոյ։ Էլեքտրաքարշի ու կառքերի երթևեկութիւնը շարունակվում է։ Լրագրներից մի քանիսը միայն լոյս չեն տեսել։ Գէնուայում աշխատանքի պալատը դիմեց բանուորներին, կոչ անելով գործադուլ չանել։

—

Վիէննա.—«Միլիտարիշէ-Ռունդշաուի» ասելով, մօտ օրերս իրանց տներն են արձակվում պահեստի զինուորները Բօսնիայից, Հերցեգովինայից ու Դալմացիայից։

—

Շանխայ.—1500 ապստամբներ կատարի յարձակում գործեցին Կիանգսանի մօտ կառավարչական զօրամասի վրա, բայց յետ մղվեցին, կորցնելով 200 սպանվածներ ու վիրաւորներ։ Կառավարական զօրամասի կորուստը անհայտ է։ Վուզունի ամրութիւնները պաշարված են երեք կողմից։

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

Հրաժարական Արարատեանի արքեպիսկոպոսի

Կ. Պոլիս, 19 յուլիս

Հակառակ Արշարունի որբազանի ջանադրութիւններուն՝ իր հրաժարականի խնդիրը փակելու համար, այսօր կատարուած իրողութեան մը առջև կը գտնուի ինքն և պարտաւորուած կը հրաժարի։

Անցեալ չորեքշաբթի օր խառն ժողովի պատահածները արդէն ծանօթ են «Մշակի» ընթերցողներուն։

Այս երեքշաբթի օր խմբակցութեանց բոլոր ներկայացուցիչները, ինչպէս նաև վարչութեան կրօն. և քաղ. ժողովներու ներկայացուցիչները գումարում մը ունեցան և քննութեան առնելով կացութիւնը և ժամանակին պահանջները, ինչպէս և Արշարունի պատրիարքի հեռագիրէ աւելի շեշտուած անփութութիւնը և անկարողութիւնը՝ իբր հետեւանք իր հիւանդագին վիճակին, որոշեցին առաջարկել նորին ամենապատուութեան, որ ազգային կենսական շահերը նկատի առնելով՝ պարզ հրաժարական մը տայ և քաջուի պաշտօնէ։ Այս եզրակացութիւնը Արշարունի սրբազանի հաղորդելու պաշտօնը տանձնեց Գրիգորիս ծ. վ. Պալատեան։ Հետեւեալ օրը, Արշարունի սրբազան պատրիարքարան եկած էր առաւօտուն, նախագահելու համար խառն ժողովի շարաթական նիստին, սակայն լսելով անցած-դարձածը ներկայ չեղաւ ժողովին, և Պալատեան վ. երբ իրեն ներկայացաւ խմբակցութեանց ժողովին եզրակացութիւնը հաղորդելու համար, պատասխանեց, թէ որոշած է հրաժարիլ պատճառաբանեալ հրաժարականով մը։

Այս հնարիմաց ու ճարպիկ հնարքը, որով իր պաշտօնավարութիւնը կրնար երկարաձգուիլ կարճ շրջան մը, թելադրուած էր երկու ողորմելի անձերու կողմէ, որոնք վերջերս շատ մօտէն յարաբերութիւն կը մշակէին Արշարունի սրբազանի հետ և տեսակ մը չար խորհրդատու հանդիսացան անոր, մասնաւորապէս իր շատ պարագային յարմար հրաժարականը և շատ գեղեցիկ կերպով յղացուած ձևը վրիպեցուցին և այն հրաժարականը փոխանակ իր վարկն ու պատիւը բարձրացնելու ծառայեցնելու, [illegible] վերջին պահուն յայտարարել տալով թէ հրաժարելու գաղափարը լքած է։

Հիմա ճնշման տակ գրեթէ կուտայ իր հրաժարականն ու կուզէ վերջին ոգևորումներ ու ջանադրութիւններ ընելով՝ երկարել իր հոգեվարքը, որ, ինչ որ ալ ըլլայ, երկար չպիտի տևէ։

Սակայն վերջին պահուն Արշարունի սրբազանի մէջ յաղթեց ողջախոհութիւնը և ուղիղ արամաբանութիւնը, և ի վերջոյ տեղի տուաւ ազգային միահամուռ կամքին առջև և երէկ պատրաստեց իր պարզ հրաժարականը՝ մատուցանելու համար Բ. Դրան և ազգ. ժողովին։

Այսօրուան ազգ. ժողովը պիտի զբաղի այս հրաժարականի խնդրով, և առանց երկար ձգձգումներու կը կարծուի, թէ պիտի ընդունուի հրաժարականը։

Արշարունի սրբազանի անկումը շատ անփառունակ եղաւ դժբաղդաբար, սակայն եղաւ նաև առանց վէճի և աղմուկի, առանց երկպառակութեանց, առանց շփոթի և խաղաղութեամբ, որպէս վայել է եկեղեցւոյ պաշտօնէի մը։

Արշարունի սրբազանի ցոյց տուած խաղաղասիրութիւնը գնահատելի է ուրեմն։ Արշարունի սրբազան իր վրայ դրուած յոյսերը չիրցաւ իրագործել, վասն զի հոգիս պատրիարքական պաշտօն ստանձնած էր, երբ, Պանկալթիի գերեզմանատան խնդրոյն պատճառով, ծանր յուզում մը ունեցաւ։ Այս յուզումը, որ ստադրոը պատճառ եղաւ, որ ինքն ենթարկուեցաւ շաքարախտի, ինչ որ անգամ մը ևս սաստկացուց իր ջղային խանգարուած վիճակին առաջ եկած ֆիզիքական աւերն ու քայքայումը։

Արշարունի սրբազան պատրիարքական պաշտօնին պահանջումները գոհացնելու անկարող դարձաւ, և ասկէ առաջ եկան յապաղումներ, զանցառութիւններ և թերացումներ, ընդհանուր առմամբ նէգատիվ մը, որ բնաւ ներելի չէ։

Արշարունի սրբազանի յաջորդը, որ խմբակցութեանց որոշումով պիտի ընտրուի շատ մօտ ժամանակին մէջ, հաւանական է, որ ըլլայ Դիարբէքիրի առաջնորդ Զաւէն եպ. Եղիեան, որ 18 տարիներէ ի վեր կը պաշտօնավարէ բուն իսկ Հայաստանի մէջ, Կարնոյ, Վանայ և Դիարբէքիրի վիճակներուն մէջ իբր թեմական և ունի մեծ փորձառութիւն և ծանօթութիւն այդ շրջանակին մէջ։

Իր ընտրութեան համար ընդհանուր համակրութիւն կայ։ Արշարունի սրբազանի ընտրութեան ատեն ալ իր վրայ խօսուեցաւ, սակայն այն ատեն դաշնակցականները ընդդիմացան և պնդեցին Դուրեանի վրայ։ Այդ հակառակութեան հետևանքը եղաւ Արշարունիի ընտրութիւնը, որուն վրայ կեդրոնացուցին բոլոր ոչ-դաշնակցականները իրենց քուէն։

Հիմա դաշնակցականներն ալ կը համակերպին Զաւէն եպ.-ի ընտրութեան, վասն զի այս անգամ պարագաները փոխուած են։ Օրմանեան արդարացած ըլլալով ընտրելի մըն է և իրեն համակիր ունի 50-ի չափ երեսփոխաններ, որոնք եթէ զինքը չեն ընտրեր, ուրիշ քանի համար չէ, այլ անոր համար, որ կուզեն ազգային ընդհանուր համերաշխութեամբ կատարուի ընտրութիւնը և նոր վէճեր ու շփոթութիւններ առաջ չգան։

Այս պարագան զգացնել տուած ըլլալով դաշնակցականաց, որոնցմէ բաժնուած էին նաև ապատականները, պարտաւորուած համակերպեցան Զաւէն եպ.-ի ընտրութեան, մտածելով թէ հակառակ պարագային Օրմանեանի ընտրութիւնը անխուսափելի է և այդ պարագային իրենց պրեստիժին կրելիք հարուածը աւելի մեծ։

Շառայլ

ԶԱՌԱՄԱԾ ՄԻՍԻՈՆԱՐՈՒՀԻՆ

Ուստր, 25 յուլիս (Ն. տ.)

Այսօր, երբ բովանդակ քաղաքակիրթ աշխարհը հայկական հարցի լուծումովը կը զբաղի, որ Թիւրքիոյ հայոց անյիշատակ ժամանակներէ ի վեր կրած տառապանքին բարձումը պիտի ըլլայ, ու երբ ամեն կողմ հայասէր օտարներ՝ մարդասիրական բարձր զգացումներէ տարուած՝ անձնուիրաբար հայկական դատի պաշտպանութիւնն ստանձնած են ու առ այդ վերջանց ճիգեր կը թափեն, անդին Հայաստանի մէկ անկիւնը կը գտնուի զառամած միսիոնարուհի մը, miss Atkins անունով, որ մեզ համար ամենացաւալի պատճառներով հայավնաս յօդուած մը կը հրատարակէ միսիոնարութեան պաշտօնական օրգան ճանչցուած «Missionary Herald»-ի մայիսի թիւին մէջ։

Այսպիսի անվայել յօդուածի մը ներկայ հրատարակութիւնը՝ «տունը մնացած» սոյն միսիոնարուհիին կողմէ՝ մեզ համար կատարեալ առեղծուած մը եղաւ, յօդուած մը՝ որ իր մէջ կը պարունակէ այնպիսի անհեթեթ և աբսուրդ գաղափարներ ու կարծիքներ, որ ողջամիտ ընթերցողին ծիծաղը շարժելէ զատ ոչինչ ունի ուշադրութեան արժանի։

Զգիտենք իսկապէս թէ ինչն է եղած յիշեալ միսիոնարուհիին շարժառիթը իր յօդուածին տուն տուող, բայց կը կարծենք թէ՝ այն դաշտը—Էրզրում—որուն մէջ ինք կը գործէ Տիրոջը այգին մշակելու համար, այնքան հասութաբեր կալուած մը հանդիսացած չըլլալուն համար է, որ փորձած է իր սրտին սև մաղձը թափելու մեզ վրայ։ [illegible] նի մութ խորերը լոյս սփռելու նպատակաւ ճարայ եղող այս չքնաղ միսիոնարուհին իր յօդուածով ամերիկեան ժողովրդին հասկցնել կուզէ թէ՝ «հայերը քրիստոնեայ ժողովուրդ չեն, բարոյապէս ինկած են, կը ստեն, կը խաբեն, կինները կը ծեծեն, ու չեն գիտեր նոյն իսկ թէ՝ Քրիստոս որձ որդին է»։ Մենք կը կարծենք, որ օր. Աթքինս կատարեալապէս զառամած լինելու է, որ այսպէս աղտոտ յարձակումներ կընէ հայոց վրայ. այլապէս իր դիտակցութիւնը չպիտի թոյլատրէր իրեն, որ քրիստոնէութիւնը սկիզբէն որդեգրող հայ ցեղի հասցէին այսպիսի վրան բաց ամբաստանութիւններ ընէր։

Բարեբաղդաբար գտնուեցաւ հայասէր ազնիւ անձնաւորութիւն մը, որ յիշեալ միսիոնարուհիին զառանցանքներուն արժանի պատասխանը տուաւ ջախջախիչ փաստերով։ Այդ անձնաւորութիւնը M-r. Edward Clement-ն էր, Բոստոնի ամենահեղինակաւոր օրաթերթ «Transcript»-ի նախկին խմբագիրը և «Armenia» ամսաթերթին կարևոր աշխատակիցը։ Մր. Քլէմընթ «Armenia»-ի յունիսի թիւին մէջ զօրաւոր պատասխան մը գրեց յիշեալ միսիոնարուհիին դէմ, ցոյց տալով որ հայ ազգը քրիստոնէութեան սկիզբէն յարած է, թէ՝ հայը քրիստոնէութիւնը իր արիւնին ու միսին հետ խառնած է ու ոչ թէ վերարկուի պէս վրան անցուցած, ինչպէս ամերիկեան միսիոնարները։ Մր. Քլէմընթ իր պատասխանը կը վերջացնէր հետեւեալ ուշագրաւ տողերով.

«Եթէ այս ժողովուրդը (հայը) իրապէս բարոյազուրկ և ստախօս ժողովուրդ մըն է, և ձեր նկարագրածին պէս քրիստոնէութեան անընդունակ տարը մը, քանի որ 50 տարիներէ ի վեր ձեր (միսիոնարներուդ) այդ երկրին մէջ գործելով տակաւին կարող եղած չէք անոնց հասկցնելու Քրիստոսի որուն որդին ըլլալը, ալ ինչու ձեր ոտքին նը ոստիկանատուն դարձնել։ Կարծեմ այդ բրօշիւրի մէջ է, որ Տէր-Մինասեանը ասում է, թէ ժամանակի տեղակալը, ներկայ Գէորգ Ե. Կաթողիկոսը, աւագ շաբթի տօներին հարկադրված է եղել հրաւէրներ ուղարկելու եվրոպական եկեղեցի գալու համար։ Իսկ դաղանեաբ չէ, որ եթէ մի արքեպիսկոպոս, մի ժամ օրհնող, մի եպիսկոպոս չերթան տաճար, ապա տաճարի դռները կարելի է փակել։

Ժողովուրդը չունի գրքեր, որոնցից սովորէր իր եկեղեցու, հաւատի նշանակութիւնը, հասկանար այն, ինչ որ թողնում է առանց հասկանալու, գնահատէր այն, ինչ որ հեշտութեամբ փոխարինում է օտարինի հետ՝ առանց գնահատելու։

Այսպիսով հայ ժողովրդի, մանաւանդ գիւղականի, հոգևոր-բարոյական վերածնութեան համար ոչինչ չէ արված. իսկ ժողովուրդը հոգևոր ողորմելի պաշարով անկարող է դիմանալ գայթակղութիւններին։

Հայ ժողովրդի հոգեկան պահանջները այսպիսի բաւարարութիւն են ստանում. նոյն խայտառակ և ամօթաբեր կացութիւնը ունի քահանայական դասակարգը, որին յանձնված է ժողովրդի հովութիւնը, առաւելապէս գիւղանը. այդ դասակարգի գոյութեան աղբիւրներն են՝ բօշայութիւն, մուրացկանութիւն, ձեռք մեկնել, մեռել կողոպտել և այդպիսով ապրուստ հայթայթել. որովհետև ոչ ոք չէ կամենում այդպէս ապրուստ ունենալ, ուստի և ոչ ոք կրթվածներից չի մտնի քահանայական ասպարէզ։

ռութիւն նկատելով հայ բողոքականները։ Իր ակնարկը ազգին ընդհանուրին մասին էր, ուրեմն պէտք էր, որ հայ բողոքականները խուլ ձեացնէին իրենք զիրենք և խնդիրը կարևորութեան զուրկ նկատէին այսպիսի փափուկ պարագայի մը տակ, երբ ամեն կողմ հայանպաստ կարծիքներ զոյացնելու պէտքը կայ։

Թող մտածեն...։

Մաղաք Գ. Պէրպէրեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴԱՒԱՆԱՓՈԽՈՒԹԻՒՆ

Հաստատ տեղեկութիւններ կան, որ վերջին ժամանակներս մի քանի հայ գիւղերում ուղղափառութեան յարելու փորձեր են լինում և խնդիրներով դիմումներ ուղղափառ հոգևորականութեան։

Պատճառները տնտեսական են. ապրուստի դժուար կացութիւն, սոցիալական պայմաններ, համագիւղացի հարուստների բարոյական և նիւթական ճնշումները։ Եւ այսպիսի դէպքերում պատասխանատուութիւնը ձգում են տեղական քահանաների վրա, որոնք որպէս թէ չեն կարողանում ազդել իրանց հօտերի վրա բարոյապէս։ Ապա սկսում են հնացած նօտացիաներ յարդոներին։

Զը կամենալով պաշտպանել քահանաներին և կարևորութիւն տալով այդ նօտացիաներին առ ի չգոյէ լաւագոյնի, հարկաւոր եմ համարում յայտնել, որ Էջմիածնի կողքին կան ուղղափառ, բողոքական, մի քիչ հեռու անցնենք՝ հայ-կաթոլիկ գիւղեր. մանաւանդ առաջինները աւելի նոր ժամանակումն են առաջ եկել։ Զէ որ այս տեղերում եղել են քարոզիչ վարդապետներ, որոնց քարոզները ուղղված են եղել ի պաշտպանութիւն հաւատի, ազգութեան, ազգային սովորութիւնների և աւանդութիւնների, այնու հանդերձ դաւանափոխութիւնը եղել է, կայ և պէտք է անտեսական հարցերի շուրջը։ Գոնէ դարձողներն այդպէս են պատճառաբանում, հաւատում է հոգևոր իշխանութիւնը և հարցի լուծումը դրանով վերջանում։ Օրինակ՝ Ղազախի շրջանի մի գիւղ որոշում է ուղղափառ դառնալ՝ սրտնեղած սինոդի վճռից, որով այդ գիւղին յատկացված ուխատեղիի արդիւնքը տրվում է միւս հայ գիւղին։ Այստեղ արդէն չը կան յիշեալ տնտեսական պատճառները. այս դէպքը արդէն մտածողութիւնը այլ կողմն է ուղղում։

Զը հերքելով հարցի տնտեսական կողմը, սակայն և չը համարելով այն միակ պատճառը, պիտի ասել, որ դաւանափոխութիւնը ունի մի շարք նպաստող խորը արմատներ։

Ժողովուրդը չէ կարողանում հասկացնել իր հոգեկան ցաւը. սակայն դա, երևում է, կամ մեղք ու ամօթ է համարում յայտնելու, որ ինքը դաւանափոխ է լինում, որովհետև չէ հասկանում իր եկեղեցու լեզուն, նրա համար մեռած հնչիւններ են ժամակարգութիւնը և ամբողջ անցած-դարձածը եկեղեցում և ժամերով եկեղեցում կանգնելուց յետոյ, երբ հեռանում է, հետը ոչինչ չէ տանում, որը նրա հոգուն և սրտին մնունդ տար։

Նոյնիսկ աշխարհաբար Աւետարան անգամ չը կայ, որը կարդար ժողովուրդը, հասկանար նրա բարոյախօսական քարոզները։

Եէջմիածինը շարունակ փորձեր է արել աշխարհաբար թարգմանելու Աւետարանը և տպելու, մացնել որոշեալ փոփոխութիւններ եկեղեցական կարգերի, ծէսերի, աստուածպաշտութեան մէջ, սակայն այդ բոլոր փորձերը իբրև փորձ մնացել են. իբրև փորձ չը մնաց մի բան. անմիջապէս կրակի մատնվեց Երուանդ վարդապետ Տէր-Մինասեանի բրօշիւրը հայ եկեղեցու վերանորոգութեան մասին, և չամաչեցին այդպիսի խայտառակ գործողութեամբ Լուսաւորչի լուսոյ խորանը ոստիկանատուն դարձնել։ Կարծեմ այդ բրօշիւրի մէջ է, որ Տէր-Մինասեանը ասում է, թէ ժամանակի տեղակալը, ներկայ Գէորգ Ե. Կաթողիկոսը, աւագ շաբթի տօներին հարկադրված է եղել հրաւէրներ ուղարկելու եվրոպական եկեղեցի գալու համար։ Իսկ դաղանեաբ չէ, որ եթէ մի արքեպիսկոպոս, մի ժամ օրհնող, մի եպիսկոպոս չերթան տաճար, ապա տաճարի դռները կարելի է փակել։

Ժողովուրդը չունի գրքեր, որոնցից սովորէր իր եկեղեցու, հաւատի նշանակութիւնը, հասկանար այն, ինչ որ թողնում է առանց հասկանալու, գնահատէր այն, ինչ որ հեշտութեամբ փոխարինում է օտարինի հետ՝ առանց գնահատելու։

Այսպիսով հայ ժողովրդի, մանաւանդ գիւղականի, հոգևոր-բարոյական վերածնութեան համար ոչինչ չէ արված. իսկ ժողովուրդը հոգևոր ողորմելի պաշարով անկարող է դիմանալ գայթակղութիւններին։

Հայ ժողովրդի հոգեկան պահանջները այսպիսի բաւարարութիւն են ստանում. նոյն խայտառակ և ամօթաբեր կացութիւնը ունի քահանայական դասակարգը, որին յանձնված է ժողովրդի հովութիւնը, առաւելապէս գիւղանը. այդ դասակարգի գոյութեան աղբիւրներն են՝ բօշայութիւն, մուրացկանութիւն, ձեռք մեկնել, մեռել կողոպտել և այդպիսով ապրուստ հայթայթել. որովհետև ոչ ոք չէ կամենում այդպէս ապրուստ ունենալ, ուստի և ոչ ոք կրթվածներից չի մտնի քահանայական ասպարէզ։

առաւելապէս գիւղերում. ինչքան թանաք, թուղթ է գործադրվել և գրիչ մաշվել այդ հարցի շուրջը՝ բարձրացնելու համար այդ դասակարգը և ազնուացնելու, սակայն հոգևոր իշխանութիւնը գիտցել է միայն պատժել քահանաներին, նրանց յանձնել մարմնաւոր իշխանութիւններին յանցանքների համար, թէև մասամբ այդ յանցանքները հետևանք են եղել զուտ աղքատութեան և կարօտութեան. գիտցել է նրանց բանեցնել ձրիաբար. սակայն պարտաւորութիւն չի զգացել զբաղվել և նրանց ապրուստի հարցով, գոնէ այնքանը միայն ի նկատի առնելով, որ, ինչպէս ասվեց, ժողովրդի բարոյական-հոգևոր կրթութիւնը քահանայութեան ձեռքին է, որպէսզի այդ կոչումը ընդունէին թեմականաւարտներ, ճեմարանաւարտներ։

Այսօր մեծ մասամբ հայ քահանաները ապրում են պետական դպրոցներից ստացած ռոճիկներով, առաւելապէս գիւղերում։ Զարմանալի չը պէտք է թւայ, որ իրերի այս դրութեան մէջ տականքները և կասկածելի մաքրութեան տէր անձնաւորութիւնները լինեն քահանայ էժանագին և նոյնքան կասկածելի վկայականներով և փոխանակ ժողովրդին հովանաւոր՝ իրանց հովանի, գայթակղութիւն լինեն և առաջին իսկ գնդակի ձայնից «իրանք հանդուրժը թուրքանան»։ Եւ մեր իրականութիւնը տալիս է օրինակներ դաւանափոխութեան յատկապէս քահանաների պատճառով։

Այստեղ արդէն ակամայ յիշում ես Խորենացու խօսքերը. ոչ կարգ, ոչ մեհեանների պաշտամունք. այս աշխարհի ոչ առաջինն է յայտնի, ոչ վերջինը, այլ ամեն ինչ խառն և վայրենի. մի աշխարհ, որի մէջ «այր չարամբելանէ»։

Հազարաւոր տարիներ անցել են այդ խօսքերը ասվելուց յետոյ. սակայն այդ խօսքերը այսօր ևս պահում են իրանց ճշմարտութեան թարմութիւնը հայ հոգևոր դասի և եկեղեցու վերաբերմամբ։ Այսօր ևս [illegible] թիւն, խայտառակ կամայականութիւն. յուսահատեցնող լրբենի սովորութիւն. «օրէնք ի ձեռս առաջնորդաց են»։

Եւ օրէնքի, կանոնի բացակայութիւնը կայ մեծ չափով մեր հոգևոր կեանքի և այլ մասերում, որոնցից իւրաքանչիւրը կարիք ունի մաքրվելու, թարմանալու. ամուսնական խնդիրներ, ապօրինի կենակիցների վիճակը գիւղերում, չհաստատիչները, ամուսրիութեան և պսակի վկայական ձեռք բերելու դժուարութիւնը. մի երիտասարդ այսպիսի վկայական ձեռք բերելու հնար չունենալով՝ հարկադրված դիմել է օտար եկեղեցի պսակվելու։ Կարելի է անվերջ օրինակներ բերել ապացոյց այն բանի, որ աղգական, խնամական, հոգևոր չհաստատիչների պատճառով կաթոլիկ, բողոքական եկեղեցիներում պսակվելը սովորական երևոյթներ են։ Այս յիշվածները բաւական են ըէլիէֆ կերպով ցոյց տալու համար թէ ինչքան զօրեղ, բողոքող պահանջ կայ նորոգվելու և նորոգելու, դուրս գալու քարութիւնից, ամաչելու և ոտք դնելու ժամանակի հետ։

Ամաչելու անընդունակութիւնը առաջ է բերել խնդրութիւն մեր կեանքի բոլոր մասերում և մէջտեղ է ընկել լալկանութիւնը։

Վայ հաւատ են փոխում, հաւատ չը կայ, դպրոցները փակվում են, ժողովուրդը փչանում է և այլն, բայց ոչ ոք չէ հարցնում, ինչ են արել Էջմիածին, սինոդ, առաջնորդ տարիների ընթացքում, և ինչ են ուզում անել։ Ոչինչ։ Իսկ ինչ կանվի, այդ էլ կապրենք և կը տեսնենք, թէև ոչ մի յոյս չը կայ։

Չը կայ տարրական, չը կայ սկզբունքով յաջորդական գործունէութիւն, չը կայ մաքի և հոգու տոկունութիւն, չը կայ խնամելիզնութիւն հոգևոր երաբխայի թէ վերևում, թէ մէջտեղում և թէ ներքևում։ Եթէ բոլոր կաթողիկոսների, առաջնորդների, սինոդի գործերը քննենք, կը տեսնենք շատ գծեր, բայց բոլորը չը վերջացրած գծեր. կարճ, միջին, երկար, որովհետև ոչ ոք նախորդինը չի շարունակել, այլ ինքը նորն է սկսել և կիսատ թողել. յոյս կայ, որ իրանցը ևս ոչ ոք չի շարունակի։ Պէտք է ասել, որ այս մասում էջմիածինը ուշից հետևել Գէորգ Դ.-ին հայկական ձայնագրութեան պահանջի կօնդակով, որի շնորհիւ պատրաստի տիրացուների ծախքերն են կորել, իսկ ընտրող գիւղերն առանց քահանաների մնացել։

Հայերը դաւանափոխ, հաւատափոխ են դառնում, սակայն չեն դառնում միայն անտեսական հաշիւներից դրդված. դրա համար հայը շատ փչացած պէտք է լինէր։ Դաւանափոխութեան պատճառները շատ խորն են, քան այդ մենք կարծում ենք։ Մեր ամբողջ եկեղեցական-հոգևոր-վարչական կեանքը առատ նիւթ է տալիս դաւանափոխութեան համար։

Հիմքից մինչև վերը այդ կեանքը բոլորովին վերածնվելու է։

Լ. Մինասեան

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԽՈՀԵՐ

II

Ամեն մի ազգի, գլխաւորապէս հայ ժողովրդի, նկատի ունենալով սոցիալական պայմանները, կայունութեան ու յարատևութեան հիմքը ծառայելու է այն պարագան, թէ հայ հասարակութիւնը կուլտուրական ինչ աստիճանի վրա է կանգնած և արդեօք հայերը իրանց ձեռնհաս կը համարեն մարմնչելու բարձր կուլտուրայի գիտական նուաճումների հանդէպ և կարող կը լինեն զերծ մնալու իրանց կուլտուրայով քաղաքական ոտնձգութիւններից, կլանվելուց։

Պատասխանը ըստ ինքեան բացասական է։ Եթէ այդ այդպէս է, ապա ուրեմն ստիպողական է մատնել այն միջոցների մասին, որոնցով հայ ժողովուրդը կարողանի ունենայ՝ նման պարագաներում իր դիրքի մէջ մնալու և ազգայնական հանկընդէմ պայքարների դիմաց իր ազգային ինքնուրոյնութիւնը անխախտ պահպանելու... Բայց այդ անհրաժեշտ կարիքին բաւարարութիւն կարող են տալ միմիայն ժողովրդական կանոնաւոր դպրոցները, ուր մնվելով մանուկ սերունդը ազգային, բայց ոչ շովինիստական ոգով՝ դաստիարակվում է մեր ապագայ քաղաքացիութիւնը, որի ձեռքն են անցնելու ազգային գործերը և դեկավար է հանդիսանալու հասարակական խնդիրները լուսամիտ գաղափարներով կարգադրելու։ Խօսք լինել չի կարող այն մասին, որ հասարակութեան անդամները որքան ողջամիտ լինեն, այնքան նրա ազգայնութիւնը ապահովված կարող է համարվել։

Ընդունելով այն ճշմարտութիւնը, որ ներկայ կացութիւնից մեզ կարող է ազատել միմիայն ազգային կուլտուրան, այլապէս ասած դպրոցը, ուր մշակվում է մայրենի բարբառն ու ծաղկում է գրականութիւնը, ցանկալի ենք համարում, որ այժմ և եթէ մեր ազգայինները ձեռնարկեն մի շարք դպրոցների բացմանը։

Ի հարկէ, այդ պարտականութիւնը ընկնում է թեմական տեսուչների վրա, որոնք պարտաւորված՝ պէտք է շրջգային իրանց թեմերում գտնված գիւղերն ու աւանները, և ուր չը կան դպրոցներ և կամ եղածները փակվել են, իսկոյն և եթէ ձեռնարկեն վերաբացմանը։

Ահաւասիկ հրատապ խնդիրներից մէկն [illegible] մանուներում։ Իսկ դա այնքան էլ մեծ դժուարութիւնների հետ կապված չէ, որ թեմ. տեսուչները ստիպված լինեն կանգ առնելու նման պահանջի բաւարարման հանդէպ։ Բաւական է որոշ գումար յատկացնել թեմ. տեսուչներին՝ ճանապարհածախսի համար և սրանք էլ անշուշտ կաշխատեն ամեն ջանք գործադրել իրանց վրա դրված պարտքը կատարելու։ Հարկաւ որոշ խոչընդոտների կը հանդիպեն՝ շնորհիւ տգէտ գիւղացիութեան, սակայն կամքի տոկունութիւնը կայանում է նրանում, որ ամեն մի արգելարգելի հանգամանքները յաղթահարելով՝ առաջ տանեն իրանց միտքն, ի նպաստ կուլտուրայի։

Դեռ ևս բաւական չէ, որ հայաբնակ գիւղերում դպրոցներ բացվեն. դրանով վերջը չի բուժվի։ Հարկաւոր է դպրոցներին խնամողներ գտնել. որոնել անձինք, որոնք նը պատեն դպրոցի կրթականի բարձրացմանը. իսկ այդ պաշտօնով կոչված է ուսուցչութիւնը, որ պէտք է զինված լինի մանկավարժական փորձառութեամբ և օժտված՝ գիտական պատրաստութեամբ։ Չը պէտք է մոռանալ մի բան ևս, որ գիւղական ուսուցիչը նաև առաջնորդ է հանդիսանում տեղական ժողովրդի հասարակական գործերի. այլապէս ասած՝ գիւղացու հոգեկան մինիմալ պահանջներին՝ ուսուցիչն է որ պէտք է բաւարարութիւն տայ։

Սակայն տեսնենք, թէ ունե՞նք մենք գիւղական այնպիսի ուսուցիչներ, որոնք գոնէ փոքր ի շատէ նպաստեն ժողովրդի մաքի լուսաւորմանը։

Նկատի առնելով միմիայն Երևանի թեմը, մենք գալիս ենք այն եզրակացութեան, որ ուսուցիչներից թւով 132 հոգի՝ միջնակարգ կրթութիւնից ցած պատրաստութիւն ունենալով՝ չեն կարող իրանց պաշտօնը տանել այնպէս, ինչպէս որ հարկն է։ Նման ուսուցչութիւնը ինքը ևս թերուս է, ապա ուրեմն ինքը ինչպէս կարող է օջախի լուսաւոր ջահը դառնալ։ Շատերը անցէնդ ուսուցիչների նկատմամբ այն կարծիքի են, որ նրանք անցէնդ լինելով հանդերձ՝ կարող են շատ փորձված լինել. սակայն դա էլ հարց է. թէ թերուս ուսուցիչներից քանի տոկոսն է փորձված համարվում, գուցէ այդպիսիները երջանիկ բացառութիւն են կազմում, որոնց մասին ի հարկէ խօսք լինել չի կարող։ Բայց երբ մենք նկատի առնելու լինենք այն հանգամանքը, որ այդպիսի ուսուցիչները մեծ մասամբ կառավարում են միդասեան դպրոցներ, ուր չունենալով ընկեր ուսուցիչներ չեն կարողանում օգտվել՝ որոշ թերութիւններ ուղղելու համար, շատ պարզ է, որ նրանք չեն կարող փորձվել. միով բանիւ իրանց սխալները ամեն տարի կարող են նոյնութեամբ կրկնել. թէև տարվայ ընթացքում տեղի են ունենում փորձնական դասեր և 1—2 անգամ տեսչի այցելումներ՝ սակայն այդ պարագաներն էլ չեն կարող բարերար ազդեցութիւն ունենալ։

Մենք մտադրութիւն չունենք այդպիսիներին դատապարտելու, որ ուսման, կրթական գործը յանձն են առնում. այլ մենք ցաւելով մատնանշում ենք այն պայմանները, որոնցից առաջ են գալիս նման դէպքեր...

Մեթէ ռոճիկների բաշխմամբ չը պէտք է բացատրել այն հանգամանքը, որ անցէնդ և նոյնիսկ ուսուցչական պատրաստութիւն անարժան անձինք մեր դպրոցներում տեղ են բռնում. այդպիսիները, շատ լաւ իմանալով որ բաւարար ռոճիկներով տեղ չեն կարող գտնել (խօսքս նրանց մասին չէ, որոնք որոշ կուլտուրայի պատկանելով են չաղ պաշտօնների տիրացել), համաձայնվում են հոգաբարձութեան առաջարկած ռոճիկով պաշտօնավարել, որից և տուժում է դպրոցի կրթականը։ Բայց այժմ քանի որ աղաղակող պահանջ է դարձել դպրոցների կրթական բարձրացումը—իսկ այդ կարող են տալ միմիայն ձեռնհաս և ըստ ամենայնի պատրաստված ուսուցիչները—ապա ուրեմն անհրաժեշտ է ռոճիկներն աւելացնել, որով իւրաքանչիւր ուսուցիչ սիրով յանձն կառնի պաշտօնավարելու համար գնալ նոյնիսկ ամենայտ ընկած գիւղերն ու աւաններ. չէ որ ուսուցիչները աւելի շատ պահանջներ ունեն, որոնք անհրաժեշտորէն պէտք է բաւարարվեն. ուրեմն տանք ուսուցչին գոնէ ապրուստի տարրական միջոցներ, որպէսզի նա առօրեայ հոգսերից ազատ մնալով կարողանայ նուիրվել միմիայն իր վեհ կոչմանը՝ մատաղ սերնդի կրթութեանն ու ժողովրդի բարեկեցութեանը։

Միմիայն ռոճիկի յաւելմամբ կարելի է դպրոցների կրթական մակարդակը բարձրացնել, մի բան, որ հիմք կարող է ծառայել ապագայ կուլտուրայի համար։ Դպրոցներում ունեցանք պատրաստի ուսուցիչներ, կունենանք նաև պատրաստի սերունդ, որի անդամներն ապագայում ազգային գործօններ են հանդիսանալու։ Ապագայ կարող, ողջամիտ, լուսամիտ սերունդից է կախված հայ ազգի վիճակը։ Նոր սերունդն է, որ անօրինելու է մեր բաղդը։ Ուրեմն պատրաստենք առողջ սերունդ ամենիւ մարդկանցով։

Աստ. Վարդանեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Մարեխը վտանգ է սպառնում

Թաղար գիւղ (Տիրակի շրջ.), 23 յուլիսի

Սաստիկ երաշտ լինելու պատճառով այս [illegible] դած է միջակ, մինչ խոստանում էր շատ լաւ լինել, եթէ մայիսին մի երկու անգամ անձրևած լինէր։

Զատիկ դուրս պակաս է և ջուրը, որի պատճառով ամեն օր կռիւ ու ծեծ է լինում։

Անցեալ տարի Արաքսի մօտից թռչելով մեր գիւղի հողերն է անցել քիչ թւով մորեխ, որի մասին ժամանակին ուշադրութիւն չը դարձրին գիւղացիք՝ անհոգ լինելու պատճառով։ Բայց այդ անհոգութիւնը, որ կարելի կը լինէր իր ժամանակին բոլորովին ոչնչացնել, այժմ ձու ածելով շատացել է։ Մորեխը թէև այժմ քիչ վնաս է տալիս, բայց դրա մասին եթէ հէնց այժմվանից ուշադրութիւն դարձնող չը լինի ու այդ պատուհասը կրկին մնալով ձու ածէ, իսկապէս եկող տարվանից մեծ վտանգ կը սպառնայ ոչ թէ միայն մեր գիւղին, այլ ամբողջ մեր գաւառին։

Ցարարի

Թէոդորոս Խաչիեանի մահը ու թաղումը

Շուշի, 26 յուլիսի

Ամսոյս 25-ին Մեղրեցոց ս. Աստուածածին եկեղեցու բակում հողին յանձնվեց նոյն եկեղեցու ծիսական Թէոդորոս Խաչիեանի մարմինը։

Թէոդորոսը մօտ 73 տարեկան էր։ Պատարագիչն էր վիճակիս առաջնորդ Զաւէն վ.-ը, բայց քարոզ խօսեց Խորէն քահանան։ Հանգուցեալը խաղաղ, եկեղեցասէր և ազգասէր էր։ Իր կենդանութեան ժամանակ կառուցել է Մեղրեցոց եկեղեցու բակում գտնվող շինութեան վերին յարկը, որի վրա ծախսել է 3000 ր. և այնտեղ զետեղել նոյն եկեղեցու ձրիավարժոցը, ուր սովորում են 100-ից աւելի մանուկներ։

Քարոզիչը ապա յիշատակեց, որ հանգուցեալի ազգականները որոշել են նրա յիշատակին տալ՝ 1) Ղարաբաղի թեմ. դպրոցին 1500 ր., 2) Մարխամեան օրիորդ. դպրոցին 1000 ր., 3) Կ. Հ. Բ. Ընկ. Շուշու ճիւղին 1000 ր., 4) Ժամհարեան հիւանդանոցին 1000 ր., 5) Զուլհականոցին 250 ր., 6) Տեղական որբանոցին 250 ր., 7) Էջմիածնին 1000 ր., 8) Մեղրեցոց եկեղեցուն 1000 ր., 9) Ծխատէր քահանաներին 300 ր., 10) Կուսանաց մենաստանին 200 ր., 11) Քաղաքի 4 եկեղեցիներին՝ բաժանելու չքաւոր քաղաքացիներին 400 ր.։ Ընդամենը 7900 ր., որվիսի գումարը եթէ աւելացնենք դպրոցի վրա ծախսած 3000 ռուբլուն, կը լինի ընդամենը 10,900 ր.։

Հայր Խորէն քարոզիչ քահանան ապաբարեց եկեղեցում, որ հանգուցեալի մնացած խոշոր կարողութիւնը կտակված է մի բարենպատակ հիմարկութեան։

Հանգուցեալ Խաչիեանը անժառանգ է։ Կողմնակի կերպով լսում է, որ նա թողել է 200,000 ր. կարողութիւն, որից 100,000 ր. կտակված է Ղարաբաղում բանալու մի գիւղատնտեսական դպրոց, որի կարիքը արդարև զգալի է։

Ղարաբաղի ժողովուրդը տարէ-ցտարի գաղթում է, նրա հոսանքը հասել է Խիվայի, Բուխարայի խանութիւններին և Սիբիրի հեռաւոր կողմերը, որովհետև հողը խիստ պակաս է, իսկ եղածից ժողովուրդը օգտվել չէ կարողանում, որովհետև մշակելու և շահագործելու ձևերը չը գիտէ։ Կարևոր է Ղարաբաղում մի գիւղատնտեսական դպրոցի հիմքը դնել։

Հանգուցեալի վրա դրված էին թարմ ծաղիկներից հիւսված և մետաղեայ մի քանի պսակներ։ Հանգուցեալի եղբօրորդին՝ Պավլի Խաչիեանը պակի փոխարէն 15 ր. նուիրեց Մեղրեցոց եկեղեցու ձրիավարժոցի դրամարանի հիմք դնելուն։

Հանգուցեալի յուղարկաւորութեանը մասնակցում էին 13 քահանաներ զուսպ ունենալով վիճակի կառավարիչ Զաւէն վարդապետին և երկսեռ ահագին և անհամար բազմութիւն։ Խանքենդից եկած էին 8 հոգի ներկայացուցիչներ իրանց քահանայի հետ միասին, մխիթարելու հանգուցեալի մերձաւորներին, որոնցից մէկը տէր է Խանքենդի կալուածքներին։ Պետ

ՆԱՄԱԿՆԵՐ ՆԱԻԹԱՇԽԱՐՀԻՑ

X

Ո չ ի ն չ մ ի գ ր է ք

Բաքու, 23 յուլիսի

«Ոչինչ մի գրէք հայկական հիմնարկութիւնների մասին, որովհետև դրանով վարկաբեկում էք հայ հիմնարկութիւնները և խայտառակում հայի անունը»։

Ահա այն ողբմելի արամաբանական արգումենտացիան, որ այնքան սիրելի է դարձել Բաքուում։

Բաւական է, որ մէկը համարձակվեց մի բան գրել մեր հասարակական հիմնարկութիւններից մէկի մասին, համարձակվեց պարզել հասարակութեան առաջ այդ հիմնարկութեան ախտաւոր կեանքը, և ահա իսկոյն մէջտեղ է գալիս այդ արգումենտացիան։

Ամենքը գիտեն, թէ ինչ է կատարվում մեր հիմնարկութիւններից շատերի մէջ, ամենքին յայտնի է, թէ ինչ խայտառակ դէպքեր են տեղի ունենում նրանցից մի քանիսի անուան ու դրօշակի տակ, և սակայն բաւական է, որ որևէ թերթ համարձակվի լոյս աշխարհ հանել այդ դէպքերը, և ահա մարդիկ յուզվում են, կաշկանդվում են, փոխանակ ապացուցելու որ այդ սուտ է կամ սխալ, փոխանակ աշխատելու ուղղել [illegible] նում և ապարդիւն նեռում պատրաստի արգումենտացիան՝

«Դուք վարկաբեկում էք մեր հասարակական հիմնարկութիւնները»։

Տարիներ առաջ այդ պատճառաբանութիւնը հրապարակ էր նետել մեր կուսակցութիւններից մէկը։

Բաւական էր, որ մէկը համարձակվէր քննադատել այդ կուսակցութեան գործունէութիւնը, նրա անդամների արարքները լրագրութեան մէջ, և իսկոյն մեղադրում էին նրան պլօվօկացիայի մէջ։

Ոչ ոք չէր համարձակվում ուրիշ բան գրել այդ կազմակերպութեան մասին՝ առանց մեղադրվելու մասնութեան մէջ։

Այժմ էլ նոյնն է կրկնվում մեր հասարակական հիմնարկութիւնների վերաբերմամբ։

Եւ որովհետև այդ հիմնարկութիւնների մասին գրողներին չէ կարելի մեղադրել մասնութեան մէջ, որովհետև նրանք լեգալ հիմնարկութիւններ են, ուստի ասպարէզ են նետում մի ուրիշ մեղադրանք՝

«Դուք վարկաբեկում էք, հասարակութեան աչքից ձգում մեր հասարակական հիմնարկութիւնները»։

Վերցնենք նորագոյն փաստերից մէկը։

Վերջին ժամանակներս իմ թղթակցութիւններից մէկի մէջ «Մշակում» ես նկարագրել էի, թէ ինչեր են կատարվում տեղական «Գրական-Գեղարուեստական Ընկ.» դահլիճում տրվող երեկոյթներում։

Իմ թղթակցութեանս մէջ նկարագրված դէպքերը հաստատեց նաև «Հասպի» թերթի աշխատակից պ. Իգլան։ Ասենք, դէպքը հաստատվելու կարիք էլ չունէր, քանի որ Բաքուում շատ քիչ մարդ կը լինի, որ ծանօթ չը լինի այդ երեկոյթների հետ։

Եւ ահա սկսվեցին մեղադրանքները իմ հասցէին հասարակութեան լայն շրջանակում. ընկերական շրջաններում գանում էին, որ իմ գրածներս ճիշդ են, որ իսկապէս Ընկերութեան դահլիճում տրվող երեկոյթներում սոսկալի դէպքեր են տեղի ունենում, բայց...

Բայց ես չը պէտք է գրէի այդ բոլորի մասին, որովհետև դրանով ընկնում է թէ Մարդասիրական Ընկ. դահլիճի և թէ «Գրական-Գեղարուեստական Ընկ.» պրեստիժը, իսկ այդ երկուսն էլ հայկական հիմնարկութիւններ են...

Ահա այն ողբմելի արգումենտացիան, որ բերում են մարդիկ։

Եւ այդ առաջին, երկրորդ, երրորդ դէպքը չէ, այլ միշտ այդպէս է։

Հայոց դպրոցում խայտառակ, չը տեսնված դէպքեր են տեղի ունենում։

«Գրական-Գեղարուեստական Ընկ.» դահլիճը կափէ-շանտանի է վերածվում։

Հայ սիրողները շահագործում են բեմն ու հասարակութիւնը։

Հայկական կուլտուրական-բարեգործական հիմնարկութիւնների դեկը յանձնվում են անպէտք ու անշնորհք մարդկանց ձեռքը։

Տեղական հայ օրաթերթը սիստեմատիկաբար լռութիւն է պահպանում «ազգային գործիչների» քաջագործութիւնների մասին և ներբողականներ շռայլում նրանց հասցէին։

Եւ դուք լրագրի աշխատակիցներդ ոչինչ մի գրէք այդ բոլորի մասին, խորը լռութիւն, Զաքարէի պատանձումն պահպանեցէք, որովհետև նրանք հայկական հիմնարկութիւններ են, որովհետև ձեր գրածներով դուք կարող էք գցել այդ հիմնարկութիւնների անունները։

Այսպէս են դատում մարդիկ, այս է նրանց արամաբանութիւնը։

Վաղարշակ Թուխմանեան

ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԲԱԳԻՈՒՄ

Բաղու.—Բիբի-Էյբաթում գործադուլ աւրին Բիլսկիի և տասն մասը ֆիրմաների բանւորները։ Պահանջներ առաջադրեցին Ռուսական Նաւթի Բաղուի Ընկերութեան բանւորները։ Վերսկսեցին աշխատանքները «Պետրոլ» ընկերութեան և Ադամօլի բանւորները։ (Հ. Գ.)

—

Յուլիսի 29-ին Բաղուի նաւթարդիւնաբերական շրջանի ֆիրմաների բանւորներից ընտրված լիազօրները նաւթարդիւնաբերական համագումարի խորհրդին ընդհանուր բանւորութեան կողմից ներկայացրել են մի շարք անտեսական պահանջներ մշակված 1907 թուի յուլիսի 8-ի պահանջների համաձայն։ Այդ պահանջների մէջ մտնում են հետևեալ գլխաւոր կէտերը. 1) բանւորական օրը՝ 8 ժամվայ աշխատանք, մայիսի 1-ի տօնը տօնել անարգել, մի տարուց ոչ պակաս ծառայածներին մի ամիս արձակուրդի իրաւունք ռոճիկը պահպանելով և հանգստեան ժամեր, 2) աշխատանքի վարձ, 3) ընակարանային հարց, 4) ապահովագրութիւն, 5) բանւորական կոմիսարիատներ, 6) հիւանդանոցային հարցը և այլն։

Այդ պահանջների քննութեան համար նաւթարդիւնաբերական խորհուրդը արտակարգ նիստ է հրաւիրել։

ԼՈՒՐԵՐ ՄԵԾ-ՂԱՐԱԲԻԼԻՍԱՑԻՑ

✦ Յուլիսի 23-ին տանուտէր Ա. Ռոստոմեանի նախագահութեամբ կայացած հասարակական ժողովն աչքի առաջ ունենալով գիւղի կուլտուրական հասունացած պահանջները և խոշոր դեֆիցիտները՝ ընտրեց ընդհանուր համախօսականով բարեկարգութեան կոմիսիա, որին լիազօրութիւն տուեց իր կազմն ամբողջացնելու համար հրաւիրել, ձայնի իրաւունքով, վերջանակիչներից ձեռնհաս անձնաւորութիւններ։

Բարեկարգութեան կոմիսիայի մէջ են մտնում տեղացիներից՝ պ. պ. Մ. Սահակեան, Ն. Աղաբաբեան, Ա. Իսկանդարեան, Վ. Նալբանդեան, Ա. Ռոստոմեան և Ս. Գասպարեան. դրսեցիներից՝ բժշ. Ա. Վարդանեան, անտառապետ Ադամեան, ինժենէր-տեխնոլոգ Մելիք-Կարագեօզեան, ինժենէր Իվանով, ուսուցիչ Հ. Ամատունի և Մ. Ղազարեան։

Նորակազմ մարմնի համար կայ գործելու լայն ասպարէզ։

Ցանկանք յաջաւոր գոյութիւն և բեղմնաւոր գործունէութիւն։

✦ Գիւղում խմելու ջուր մատակարարելու հարցը վերջապէս ստացաւ իր դրական լուծումը։

Նահանգապետի կարգադրութեամբ պետական գանձարանն այդ նպատակով բաց է թողնում գիւղական «ամբարի» ֆօնդից միանուագ 10,000 ր., 10 տարի ժամանակամիջոցում առանց տոկոսի վերադարձնելու պայմանով։

Ջուրը ստանալու են «Խրինջան» կոչվող լեռնային առատահոս աղբիւրից, որը տալիս է օրը 100,000 վեդրօից աւելի։ Արդէն կազմել են նախահաշիւը։ Ամբողջ ծախսը հաշված է 19,500 ր.։ Առաջիկայ աշնան ամիսներից սկսվելու են նախնական աշխատանքները։

Ամենայն հաւանականութեամբ առաջիկայ սեպտեմբն գիւղը կունենայ ամեն փողոցի վրա քաղցրահամ, առնորակ աղբիւրներ...

Սպասենք և յուսանք...

✦ Տեղիս ծխական դպրոցի վեց դասատուների աղատ տեղերի համար ստացվել են մինչև օրս մօտ 100 խնդիր։ Դիմողների մէջ կան և այնպիսի ուսուցիչ-ուսուցչուհիներ, որոնք չը նայած ունեն պաշտօն, բայց չեն ցանկանում այդ «համեղ պատառից» զրկվել։

Ցանկալի է մերկացվի այդպիսիների դիմակը և նրանց անունները մամուլի միջոցով յայտնվեն ի գիտութիւն դպրոցական մարմինների։

✦ Աբովեան եղբայրները հիմնական վերանորոգութեան են ենթարկել դպրոցական նոր շէնքը։ Ծախսել են բաւականին խոշոր գումար։

Նոր շէնքն ունի երկու ընդարձակ սրահ և 17 լուսաւոր դասարաններ։

Բայց չունի համապատասխան կահ-կարասիք և կահաւորութիւն։

Ցանկալի է, որ հոգաբարձութիւնն իր ձեռքի տակ եղած միջոցներով վերացնէր այդ աչք ծակող թերութիւնը։

Աբովեան եղբայրների այս մարդասիրական ակտը և անկեղծ հոգատարութիւնը շարժում է շատերի բարի նախանձը։

✦ Տեղիս վաճառական Ս. Լուսեան և Ս. Գասպարեան դիմել են Նահանգապետին՝ ստանալու իրաւունք պահել գիւղում, իրանց միջոցներով ու պատասխանատուութեամբ, ձրի գրադարան-ընթերցարան։

Այս հիմնարկութեան կարիքը չափազանց զգալի է 90% գրագէտներ ունեցող հասարակութեան մէջ։

✦ Ամարային սեզօնն անցնում է կենդանի, ուրախ և անկասելի։ Համարեա ամեն օր

տեղական բոլոշնդում նուագում են զինուորական երաժշտախումբը և սաղմնդարներ։ Տրվում են հայերէն և ռուսերէն ներներ։ Տրվում են հայերէն և ռուսերէն ներներ։ Կոչ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Յուլիսի 30-ին, Գահաժառանգ Արքայորդի Մեծ Իշխան Ալեքսէյ Նիկոլայևիչի ծննդեան օրը, Ալեքսանդրօ-Նեվսկիի զինուորական տաճարում պատարագից յետոյ մաղթանք կատարվեց։ Մաղթանքին ներկայ էին զինուորական և քաղաքացիական բարձրաստիճան պաշտօնեաներ, ազնուականութեան պարագլուխն ու քաղաքային, դասային և հասարակական ներկայացուցիչները։ Մաղթանքի միջոցին Արսէնալի սարից արձակեցին սահմանված թնդանօթային 21 զարկեր։ Նոյնպէսի մաղթանքներ կատարվեցին Սիօնի մայր տաճարում, Նիկոլայևսկի զինուորական եկեղեցում, Վանքի մայր եկեղեցում, կաթոլիկաց, լիւթերականների և այլադաւանների աղօթատներում։ Քաղաքը վաղ առաւօտանից զարդարված էր դրօշակներով, իսկ երեկոյեան լուսավառված էր։

— Սև-ծովի երկաթուղագծի կառուցումը կը սկսվի առաջիկայ աշնանից, միաժամանակ հինգ մասերում, 500 վերստ տարածութեամբ։ Աշխատանքները կը տևեն 4 տարի։ Երկաթուղագիծը անցնելու է Տուապսէ-Սոչի-Գագրի-Աֆոն և Սուխում, իսկ այստեղից էլ լեռների միջով դէպի Քութայիս, անդրկովկասեան երկաթուղագծի հետ միանալու համար։

— Բօրչալուի գաւառի Սադալիլօ գիւղի խաղողի այգիներում ֆիլոքսերա երևալու պատճառով Բօրչալուի գաւառն են ուղարկված ֆիլոքսերա հետազօտողների երկու խումբ։ Մէկ խումբը աշխատում է Սադալօյի շրջանի այգիներում, որ մօտ 50 դեսեատին է կազմում, իսկ միւս աւելի մեծ խումբը աշխատում է Նուալվէրի շրջանի այգիներում, որ մօտ 1000 դեսեատին տարածութիւն է։

— Խմբագրութիւնս ստացել է քաղաքային Զուբալովի անուան Ժողովրդական Տան 1912 թ-ի տեղեկագիրը, որից երևում է, որ 1912 թ-ին Ժողովրդական Տանը գործում էր 12 սեկցիա, որոնք միասին կազմակերպել են 233 ներկայացում 11 լեզուներով։ Ամենից շատ ներկայացումներ տուել են հետևեալ սեկցիաները. ռուսաց սեկցիան՝ 49, հայկականը՝ 49, վրացականը՝ 46, ուկրայինայինը՝ 33, հրէականը՝ 12 և այլն, բոլորն էլ երեկոները։ Ժողովրդական համալսարանի դասախօսութիւններ տեղի են ունեցել 19, մասնաւոր դասախօսութիւններ և համերգներ՝ 54։ Ամենից շատ ժողովրդական ներկայացումներ տուել են հայկական սեկցիան (31), վրացականը (26) և ռուսականը (23)։ Մուտքի տեսակէտից հայկական ժողովրդական ներկայացումները առաջին տեղն են բռնում (3281 ր.), երկրորդը՝ ռուսականը (3264 ր.), երրորդը՝ վրացականը (2483 ր.), չորրորդը՝ ուկրաինայինը (2483 ր.) և այլն։ Ընդհանուր ներկայացումներից մուտք ռուսականը տուել է 6338 ռուբլի, հայկականը՝ 3748, վրացականը՝ 3004 ր. և այլն։ Յաճախորդներ ունեցել են. ռուսականը՝ 28,876 հոգի, հայկականը՝ 28,030 հոգի, վրացականը՝ 24,921, ուկրաինայինը՝ 20,019 հ.։ Մնացեալները 10 հազարի էլ չեն հասնում։ Դասախօսութիւններն ու համերգները գրաւել են ընդամենը 23,145 հոգի։

— Թիֆլիսի օրիորդաց 4-րդ գիմնազիայում փոխադրական քննութիւնները լինելու են օգոստոսի 23-ին և 24-ին, ընդունելութեան քննութիւնները պատրաստական I և IV դասարանների համար օգոստոսի 26-ին և 27-ին։ Մնացեալներում ընդունելութիւն չի լինի։

— Թիֆլիսի օրիորդաց 3-րդ գիմնազիայում վերաքննութիւնները տեղի կունենան օգոստոսի 22-ին, 23-ին և 24-ին, ընդունելութեանը՝ 26-ին, 27-ին և 28-ին։ Օգոստոսի 31-ի առաւօտեան ժամը 9-ին կը լինի մաղթանք և ապա սեպտեմբերի 2-ին կը սկսվեն պարապմունքները։ Ընդունելութեան խնդիրք պէտք է տալ մինչև օգոստ. 20-ը։ 1913/14 ուսումն. տարվայ ուսումնավարձը աւելացված է նախակրթարանի համար՝ 80 ր. տարեկան, պատրաստական դասարանի՝ 85 ր., 1-ին, 2-րդ և 3-րդ դասարանների՝ 90 ր., 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ դասարանների՝ 100 ր. և 8-րդ դասարանի՝ 110 ռուբլի։

— Էլեքտրաքարշի վարչութիւնը յուլիսի 29-ից էլեքտրաքարշի № 1 և 4 մարշրուտի մի քանի վագոնների վերևում փորձի համար դրել է ազդարար գոնդոլներ լապտերներ, որոնք հեռուից որոշակի նկատվում են, այնպէս որ էլեքտրաքարշ նստել կամեցողների համար ոչ մի դժուարութիւն չէ ներկայացնում նստել իր ցանկացած դիր վագոնը։

— Քաղաքային ծախքերի 1914 թ-ի նախահաշիւի մի մասը տպագրութեան է յանձնված, մնացեալ մասերն էլ պատրաստվում են և կուղարկվեն տպարան առաջիկայ շաբաթ։ Ամբողջ ելմտահաշիւը տպագրված կը լինի օգոստոսի 25-ին և կը յանձնվի գումայի բիւջետային-ֆինանսական մանաժողովին քննելու։

— Վէրայի քաղաքային այգում սկսվել են աւազան խորացնելու և ընդարձակելու աշխատանքները. երկարութիւնը պէտք է լինի 250 սաժէն և լայնութիւնը 40—50 սաժէն։ Աշխատանքները կատարվում են այն հաշուով, որ սեպտեմբերին արդէն կարելի լինի զբօսնել աւազանում մակոյկներով, իսկ ձմեռը՝ սառուցի վրա սահել։

— Յուլիսի 27-ին Վրաց ակումբում տեղի ունեցաւ Պետերբուրգից ժամանած օպերային երգիչ Ամիրջանի մասնակցութեամբ սիմֆոնիական երեկոյթ զեկավարութեամբ դիրիժօր Զելենսկիի։ Երգիչ Ամիրջանը բացի ծրագրի մէջ յիշված օպերային կատորներից—«Կնկաղ Իգօր», «Ներօն» և «Կարմէն»—պէտք է երգէր նաև այլ տեղական, վրացական երգեր, սակայն ինչ-ինչ պատճառներից նուագակցուհին, տիկին երգիչ Ամիրջանից, հրաժարվեց նուագակցելուց դաշնամուրի վրա, և երգիչ Ամիրջանը ստիպված երգում էր լարանուագ երաժշտութեան նուագակցութեամբ դիրիժօր Զելենսկիի զեկավարութեամբ։ Չը նայելով որ այդպիսի պայմաններում համերգային երգեցողութիւնը շատ դժուար է, սակայն փորձված երգիչ Ամիրջանը իր երգեցողութեամբ մեծ հաճոյք պատճառեց ունկնդիրներին ընտրեալ ստուար հասարակութեան, որն և անվերջ ծափահարութեամբ ստիպում էր քանիցս կրկնել։ Ինչպէս լսում ենք, շուտով տեղի է ունենալու սիմֆոնիական երեկոյթ նաև ժողովրդանում երգիչ Ամիրջանի մասնակցութեամբ։

— Ճանապարհների հաղորդակցութեան կովկասեան շրջանը սկսել է Էջմիածնից դէպի Երասխի ափին գտնվող Մարգարա գիւղը տանող խճուղին, 17,8 վերստ երկարութեամբ, բարձրացնելու աշխատանքները։ Դրա համար գանձարանը յատկացրել է 199,440 ռուբլի։

— Յուլիսի 29-ին, մօտաւորապէս երեկոյեան ժամը 8-ին Նիկոլայ Պետրովիչ Պոկրովսկին Դիդուբէի եկեղեցում եղած մի չոցին ըրան վատ զգալով ուշագաց է լինում։ Նրան բերում են Միքայէլեան փոզոցի վրա № 144 տանը գտնվող դեղատունը՝ օգնութիւն ցոյց տալու համար, ուր նա առանց ուշքի գալու վախճանվում է։ Մարմինը տեղափոխել են Միքայէլեան հիւանդանոց։

— Մօտաւոր հաշուով Կովկասում պատրաստվում են մօտ 10 միլիոն ռուբլու արժողութեամբ զանազան անասնոց գործուածքներ—գորգեր, փալասներ, խուրջիններ, չեչիմներ և այլն։ Գորգագործութիւնից յետոյ առաջին տեղը բռնում է սահուզէ և թաղիքէ արտադրութիւնները, որոնք բաւականին տարածված լինելով՝ նոյնպէս խոշոր եկամուտ են տալիս ազգաբնակութեանը։

— Մոսկվայի «Коммерсантъ» լրագիրը հաղորդում է, որ այնտեղ յուլիսի 19-ին տեղի է ունեցել «Ս. Մ. Կիրակօզով և Բ. Գ. Օգանով» մանուֆակտուրային ընկերութեան բաժնետէրերի սովորական ընդհանուր ժողովը։ Վարչութեան անդամ Վասիլովի կարդացած զեկուցումից երևում է, որ այդ ընկերութիւնը 1912/13 շրջանային տարին, որը չը նայելով եղել է կամաքերպչական, տուել է 158,809 ռուբլի զուտ օգուտ։ Այդ ընկերութեան գլխաւոր գործարանը Թիֆլիսումն է, իսկ Պետրոգրադում ունի բաժանմունք։ Ընկերութեան ընդհանուր շրջանառութիւնը թէ օպտվվի պահեստներում հասել է 3,011,096 ր., որից միայն 2,213,217 ր. օպտվվի պահեստների շրջանառութիւնն է, խանութներինը՝ հասնում է 797,878 ր.։ Ընկերութիւնը իր բոլոր պահեստներում և մագազիններում ունի 1,561,438 ր. ապրանք։ Որովհետև Պետրոգրադի բաժանմունքը լաւ առաւուր ունի միայն ամարային ամիսները, երբ հանքային ջրերի սեզոնը սկսվում է, և բացի վնասից ոչինչ օգուտ չէ տալիս ընկերութեանը, ուստի վճռված է փակել այն։

— Դիլիջանից մեզ հաղորդում են, որ առաջիկայ երկուշաբթի օր, օգոստոսի 5-ին, Ս. Դալանթար կը կարդայ այնտեղի բօտնոլայում երկու դասախօսութիւն Ալպիական անտառութեան և կենդանաբուծութեան մասին։ Դասախօսութիւնների ժամանակ մոգական լապտերի միջոցով ցոյց կը տրվեն զանազան տեսակ կենդանիների նկարներ։ Դասախօսութիւնները մատչելի են բոլոր ցանկացողների համար։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ

— Պետերբուրգ, 25 յուլիսի

Ամսիս 21-ին դերասան Ոսկանեանը սիրողների մասնակցութեամբ ներկայացրեց Ս. Թառայեանի «Ազբարիլը»։

Դերակատարները բոլորն էլ լաւ էին, քիչ բացառութեամբ։ Կենդանի տարան իրանց խաղը Ոսկանեան (Հայրապետ աղա), օր.օր. Զարէլ (Կատիա), Շխլենեան (Անտա), պ.պ. Վաղարշակ (Կոլիա), Ծովիկ (Մանուէլեան), Տ. Յովհաննէսեան (Սերոժա), Մեղնիկեան (Խրիստան բէկ). շատ ծիծաղաշարժ էր Թուրք դասաբի դերում պ. Թասալեան։

Ներկայ եղող հասարակութիւնը գոհ հեռացաւ. մուտքը 120 ր.։ Երանի թէ յաճախ կրկնվէին մայրենի լեզուով ներկայացումները։ Ներկայ այնքան կարևոր են մեր հասարակութեան համար։

Սաթ. Զաքարեան

— Ցարսկիէ-Կօլօդցի, 22 յուլիսի

Յուլիսի 21-ին տեղիս սիրողները հայոց դպրոցի պատշգամբում տուին մի ներկայացում։ Խաղացին «Լիզա» կօմէդիան։ Ներկայացումը բաւարար անցաւ։ Շնորհիւ տոմսակների էժանութեան (50—20 կ.) եկել էր շատ ժողովուրդ։ Լաւ խաղացին՝ տ. Աթաբէգեան (Լիզա), Լ. Ամեանց (Գասպար), Թ. Անանեան (Սարգիս)։ Մնացածները բաւարար էին։ Զուտ արդիւնք կը մնայ մօտ 17 ռուբլի։

N. N.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 29 յուլիսի

Հատատ աղբիւրից տեղեկացել ենք, որ Զանգեզուրի գաւառի Բռնակոթ գիւղի ծխ. դպրոցի հոգաբարձութիւնն իր խնամքին յանձնված դպրոցի ուսուցիչներից մէկի՝ Գէորգ Հայրապետեանի ուսման վայրանը դնելով նախկին խանութպան Արշակ Յակոբեան Պողոսեանի տրամադրութեան տակ՝ հնարաւորութիւն է տուել վերջինիս ուրիշի անուամբ ուսուցչութեան պաշտօն վարելու Նուխու շրջանի գիւղերից մէկում անցեալ 1912-13 ուսումն. տարում։

Ցանկալի էր իմանալ, թէ ճիշդ է արդեօք այդ, և եթէ ճիշդ է, ապա յիշեալ հոգաբարձութիւնն յանուն որ սկզբունքի ու բարոյական իրաւունքի թոյլ է տալիս կեղծիքի ենթարկել իրան վստահացված վայրանները և շահագործել անգիտակից հասարակութեան հաւատն ու հայ ուսուցչի անունը։

Յովհ. Աղոնց

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

— Պետերբուրգից հաղորդում են, որ Թիւրքիայի հայերը պետիցիա են ուղարկել Ամենայն Հայոց Կաթողիկոսին [illegible] առաջ Թիւրքիայի հայերին պաշտպանելու և Ռուսաստանի հովանու տակ առնելու համար։

— Բոլգարական զօրքերի մէջ յեղափոխական շարժում է սկսված։ Խաղաղութիւն կնքելու առիթով տեղի ունեցած մաղթանքի ու հոգեհանգստի ժամանակ Ֆերդինանդ թագաւորը լալիս էր։ Ամենքի ուշադրութիւնն է դրաւել Մավօվի բացակայութիւնը։

— Վիէննայի լրագիրների ասելով, 25,000 ալբանացիներ Իսա Բոլէտինացի առաջնորդութեամբ մտել են սերբական սահմանները։ Ալբանացիները պահանջում են վերաքննել բուխարեստեան դաշնագիրը։

— Լուր է պատում, որ Բումինիայի և Թիւրքիայի միջև կոնֆլիկտ է ծագել։ Լաւատեղեակ շրջաններում որոշակի խօսում են այդ երկու պետութիւնների միջև զինված ընդհարում առաջանալու մասին։

— Վիէննայում հեռագիր է ստացված, որ Հարմանլրում լսելի են լինում թնդանօթային որոտումներ Ադրիանուպոլի ուղղութեամբ։

— Գերմանական «Berl. Tag.» լրագիրը, աւստրիական գահաժառանգի գիրը, աւստրիական գահաժառանգից ներշնչված, ասում է, որ Ռուսաստանի համար անխուսափելի է պատերազմը։ Հանգամանքները բարձր շրջանների ցանկութիւնից աւելի են զօրեղ։ Եապօնիայի հետ պատերազմելը ևս ծագեց հակառակ այդ շրջանների կամքի։ Աւստրիան ժամանակ չունի պատերազմի պարարտելու, ուստի նա պէտք է ապահովի Բումինիայի, Յունաստանի և Թիւրքիայի աջակցութիւնը։

— Տվէրում գաւառական խորհուրդը, քննութեան ենթարկելով խուլիգանութեան վերաբերեալ կազմված օրինագիծը, հաւանութիւն է տուել զօրգին գործածութեան մէջ դնել ու առանձնապէս ծանր յանցանքների դէպքում անհրաժեշտ է ընդունել մահվան պատիժը։

— Վարշավայում ներկայումս 15 կին կառապանութեամբ են պարապվում։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

30 յուլիսի

ՍԱՐԱՅԵՎՕ։ Տուզլայի շրջանի լեռնային մասում հիւանդացել են ասիական խօլերայով 6 հոգի, որոնցից 3-ը մեռել են։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մամուլի գործերի կոմիտէը արգիլք է դրել «Рабочая Правда»-ի № 15-ի և «Живая Жизнь»-ի № 17-ի վրա։

ԽԱԲԱՐՕՎՍԿ։ Երկրի գլխաւոր կառավարչի ներկայութեամբ հանդիսաւորապէս հիմք է դրված աշխարհիս ամենամեծ երկաթուղային կամուրջի՝ Ամուր գետի վրայից, որը կառուցանում են ռուս բանւորները։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԹԻՖԼԻՍԻ ՃԻՒՂԸ
Արժեթղթերի կուրսերը
31 յուլիսի

I կ. ներք. փոխ. խ. տոմս.		484 ր.	— կ.
II » » »		353 ր.	— կ.
III Ազնւակ. բանկ. »		314 ր.	— կ.
4% Պետական բենտա		93 ր.	— կ
5% Արտաք. փոխառ.	1906 թ.	102 ր.	75 կ
5% Ներքին »	1905 »		
	I հրատ.	104 ր.	75 կ
5% » »	II հրատ.	104 ր.	75 կ.
5% Պետ. Ազնւ բանկ. գր.	թ.	99 ր.	87½ կ
4½ » » »	»	90 ր.	50 կ
4% » » »	»	89 ր.	— կ.
3½% » » »	»	82 ր.	75 կ
5% Գիւղ. հող. բանկ. վկ.		100 ր.	— կ
4½% » » »	»	90 ր.	50 կ
4% » » »	»	90 ր.	12½ կ.
5% Արտաք. փոխառ.	1908 թ.	105 ր.	25 կ.

Օտարերկրեայ դրամների կուրսը

Լոնդոն 10 ֆ. ստեր.	95 ր. 25 կ.
Բերլին 100 մարկ	46 ր. 55 կ.
Պարիզ 100 ֆրանկ	37 ր. 73 կ.
Թաւրիզ 10 դրան	1 ր. 73 կ.
Կ. Պոլիս 1 լիրա	8 ր. 65 կ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԻ ՏԻՐԱՑՈՒ

4-րդ դասարան աւարտած, ձայնագրագէտ, որ շատ աջող ձայն ունի և հմուտ է եկեղեցական երգեցողութեան հին և նոր եղանակներին, ցանկանում է տիրացութիւն անել ուր որ լինի։ Հասցէն՝ Ախալքալաք, Արշաւոյս Տէր-Սիմէօնեանին, Կարապետեանի մագազինում։
604. 1—1

Լոյս տեսաւ և վաճառվում է բոլոր գրավաճառանոցներում

ԱՐԱՄԱՅԻՍ
Գաղափարի ճանապարհին

Գինը 1 ր. 25 կ. առանց ճանապարհածախքի (ճանապարհածախքով 1 ր. 50 կ.)։ Պահեստը Թիֆլիս, «ԳԻՐ» գրավաճառանոցում. Тифлисъ, книж. маг. «ГИРЪ».
(ու.կ.ե.հ.) 590. 5—5

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
L. SOLUSOՅԻ հետեւեալ երկերը.
1) ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ, թարգմ. Սուրխաթեանի . . . . . 30 կ.
2) ԿՕՆՖՈՒՑԻՈՍ (Զիւական խմասուսը), խմբագրութեամբ Լ. Ն. Տօստոյէյ, կազմեց Ս. Բուլանժէ, թարգմ. Սուրխաթեանի . . . . . 7 կ.
3) ԱՄՍՑՈՒԱԾՆԵՐ ՄԱՀՈՒԼԻՆ, ընտրված Լ. Տօստոյէյից, թարգ. Լ. Դանիէլեանի . . . . 5 կ.
4) ՔՈՑՐԵՐ?, թարգ. Դանիէլեանի . 5 կ.
5) ԻՆՉՈՎ ԵՆ ԿԵՆԴԱՆԻ ՄԱՐԴԻԿ, թարգմ. Լ. Դանիէլեանի . . . 10 կ.
Նրանք, որոնք այս գրքերից մի-մի օրինակը պահանջեն մեզանից փոքր կանխիկ ուղարկելով, կը ստանան 10% զեղչ և հանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին զեղչ չի լինի։
Հասցէն՝ Ред. газ. «Мшакъ», Тифлисъ.
(3) 10—6

Առեւտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԻՐՈՒՄ
Թիֆլիս, Միքայէլեաց պր. 24/4. Տելէֆօն № 976.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առեւտրական կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։
Գործնական դրամագրութիւնները կատարվում են կուրսերում՝ Լօնդոնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձեւով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նիւթերն առնում են բէալ կեանքից։ Առարկաները հետեւեալներն են. ա) պարագիր. 1) Հաշուապահութիւն (պարզ, իտալ., զեմ., գիրանս., ամերիկական, բանկային և գործարանական). 2) Առեւտրական թղթակցութիւն. 3) Գրագրատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առեւտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն). 5) Առեւտրական թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համարձակի վրա. 7) Գայլեչագրութիւն, արագագրութիւն (ամենաբան ձեռքի ուղղումն). բ.) ոչ-պարագիր. 1) Ozwr լեզուներ. 2) Տպագրութիւն. 3) Գրախիլլոգրաֆիա (բիմինգոն և ուր. և 4) Առեւտր. գիր. 1) Ozwr լեզուներ։ Զրաղմունքները կատարվում են և գատ-գատ։ Ունկնդիրների թիւի թղթակցութիւն օտար լեզուներով։ Զրաղմունքները կատարվում են և գատ-գատ։ Ունկնդիրների թիւի շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարաբնակիչների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին։ Ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը։ Ծրագիրը և կանոնները տրվում և ուղարկվում են ձրիաբար։ Դասընթացքներին կից հատատված են քիչ պարապված անձանց համար առանձին պարապմունքներ։ Ոչ-պարագիր առարկաներն են՝ 1) Օտար լեզուներ, 2) Տպագրութիւն) և 3) Բիմինգոնի վրա գրել։
Ուսուցիչները բարձր կրթութիւն ստացած մասնագէտներ են, որոնք գործնականապէս և տեսակապէս պատրաստված են ամեն մի առարկայի համար առանձին։
Վկայագիրը տրվում են մինչարտութեան թոյլատրութեամբ։
Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից 1913 թ.։ Խնդրագիրների ընդունելութիւնը մինչև օր, ուրաբաթ ժամը 9—11-ը, երեկոյեան 5—7-ը։ Ծրագիրը և կանոնները տրվում և ուղարկվում են ձրիաբար։ Դասընթացքներին կից հատատված են քիչ պարապված անձանց համար առանձին պարապմունքներ։ Տարրական և լրացուցիչ պատրաստներ առանց լեզուի և թւաբանութեան համար։
Անձամբ և նամակներով դիմել՝ Тифлисъ, Учредит. Бухг. Курсовъ Н. В. Абраамяну, Николаевская, 22, Телефонъ 7—44
(կ. հ. ե.) 576. 0 5

Մեր պահեստի գեղարուեստ. բացիկների շրջանառութիւնը աւելի ընդարձակելու համար մենք ուզում ենք ձրիաբար մի cas cfՀղ տալու գեղարուեստ. 300 հաս բացիկներով կամ թէ վճարում ենք տալիս փոխարէն,
ՏԱՄՆԵՒՀԻՆԳ ԲՈՒԲԼԻ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄ
նրան, ով ուղիղ կերպով կը վճռէ ստորև բերված խնդիրը և կը պատասխէ մեզ մօտ 25 հատից ոչ պակաս գեղարուեստ. բացիկներ՝ ուղարկելով 85 կ., կամ թէ վերադիր վճարով 95 կ.։

Քառակուսի 9 վանդակներում 1—9 թւանշանները պիտի զետեղել այնպէս, որ իւրաքանչիւր ուղիղ գծի (3 վանդակի) գումարը լինի 15, և որ այդ գումարը կրկնվի, ըստ կարելոյն, աւելի շատ անգամ։ Խնդիրը լուծելու իրաւունքը պատկանում է նրան, ով ուղիղ կերպով վճռած ունի խնդիրը, ստանում է բացիկների համար։ Որովհետև իւրաքանչիւր անձ, ով ուզում է ակնոց պիտի յայտնել, թէ որ պէէմիան է ցանկանում--պլոմբ թէ գրամբ, պլէսիա, հետեւաբար գիտում ակնոց պիտի յայտնել, թէ որ պէէմիան է ցանկանում--պլոմբ թէ գրամբ, նոյնպէս և նամակի մէջ նշանակել, առանձին բարակ թղթի մի փոքրիկ կտորի վրա, ճշգրիտ հասցէն։
0-ՒՈ «ՈՒՆԻՎԵՐՍԱԼ», ԼՈԴՋԷ Ս. 27. 10 - 2
(Լ. 12951)

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎ ԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ
ԴԻՒԱՆԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԸ
(ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔՕՎԿԱՅԱ. ՓՈՂՈՑ, ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՏՈՒՆ)
կատարում է ամեն տեսակ տպարանական աշխատանքներ, այն է՝ տպագրում է լրագիրներ եւ ամսագիրներ, գրքեր, բրոշիւրներ, բլանկներ, աֆիշներ, ծրագիրներ, հարսանեկան հրաւիրատոմսեր, այցեքարտեր եւ այլն։
Ընդունվում են տպագրական պատուէրներ հետեւեալ լեզուներով՝ ռուսերէն, հայերէն, վրացերէն, թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, աբխազերէն և լեռնականների բարբառներ։
Պատուէրները կատարվում են մաքուր, ճշգրտէն և չափաւոր գներով։ Ընդունվում են նաև շուտափոյթ կատարվելիք պատուէրներ առանձին պայմաններով։
Պատուիրողների ցանկութեան համաձայն, տպարանը պատուէրները կարող է կատարել մի տարի, կամ բրոշիւրներ շինել, ու այնու յանձնել։
ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԵՐ ՊՐԻԵՑՍ-ԿՈՒՐԱՆՏԻ ԴՆԵՐՈՎ։
Տելէֆօն № 67.

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный